

Ա. ՄԱԼԵՆԻԿՈՎ, ՅԵՎ. Ա. ՄՈՒՏԵՔԵՎ,

ԿԱԹԻ ՅԵՎ, ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ  
ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

634  
—  
15-31

Մ-31

ԿԱԹԻ ՅԵՎ, ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ  
ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

6060  
42534

ՌՍՖՌՀՆ Լուսավորչական քայլատրել և  
վարպետ մեռնարկ զյուղատնտեսական  
տեխնիկականների համար

42 Ն Կ Ա Ր Ա Վ

ՊԵՏՀՐՈՒՏ. 1933. ՅԵՐԵՎԱՆ



Կաթնատնասության բնագավառում մեր ունեցած աղքատիկ  
գրականությունը չի կարող բավարարել այն հսկայական պահանջը,  
վորը ներկայումս նկատվում ե այդ ասպարեզում:

Մ. Մասլենիկովի և Ա. Սոլնցեվի «Կաթի և կաթնամթերքի հետազոտման» դասագիրքը մեր գրականության մեջ ունի առանձին  
նշանակություն՝ նաև, վոր այդ ասպարեզում մենք բոլորովին դասա-  
գիրք չունենք և հետո այդ գիրքն ուղղակի վարպետություն ուղեկից, ուսանո-  
ղին ցուց ե տալիս՝ ինչպես կատարել հետազոտման փորձը, փորձի  
տեխնիկական ձեռնարկումը, վորի այնքան մեծ կարիքն ե զգում մեր  
ուսանողությունը:

Ինչ խոսք, վոր այս գիրքը վոչ միայն տեխնիկումների ուսանող-  
ներին կարող ե սպասարկել, ալև այդ ասպարեզում աշխատող մասսա-  
յական ավելի լայն շրջաններին

Որ որի զարգացող անսամբահությունը և նրա հետ անամնա-  
պահության մթերքների վերամշակման ցանցը պահանջում և կազմեր  
և այդ կազմերը պետք ե պատրաստվեն չափազանց արագ, ընդհանուր  
տեմպի, ընդհանուր տակտի աշակությամբ, իսկ կաթնամթերքներին  
այսինքն այնպիսի մթերքների, վորոնք փշանում են չափազանց ա-  
յսինքն այնպիսի մթերքների, վորոնք փշանում են չափազանց ա-  
յսինքն այնպիսի մթերքների, այդ արագության համար ևս առաջարկվող ձեռնարկը  
անփոխարինելի յե, վորովհիտե նա զերծ ե ավելցրդաբանություննե-  
րից, սեղմ, հալիրմ տալիս ե՝ այն, ինչ անհրաժեշտ ե տեխնիկումի  
ուսանողին:

Մ. Մադարյան

## ՆԱԽԱԲԱՆ

(Թուս նրատարակության)

Նախկին Տեմիրլազեկի անվան գյուղատնտեսական ակադեմիայի իմ աշխատակիցներ Մ. Վ., Մասլենիկովի յև Ա. Ի. Սոլնցեվի՝ գյուղատնտեսական տեխնիկումների համար կազմած կաթի ու կաթնամթերքների հետազոտման այս ձեռնարկը, հնաց իրեն, կյանքի պահանջի պատասխան և հանդիսանում:

Միության մեջ աճող կաթնատնականության արտադրությունը, գեղի կաթնամթերքները լեղած և ավելի ու ավելի աճող ու բարդացող պահանջը, Խորհրդային կառավարության կողմից այս շուտ փառող մթերքների ստանդարտացումը, որ որի առաջ են քաշում մի շարք ին դիրներ, վորոնք պահանջում են այս մթերքների արտադրության և նրանց վաճառքի վրա սիստեմատիկ կոնֆրոնտացնելու սահմանելու:

Կաթի քիմիալի բնագավառում գործնականորեն աշխատող մանկավարժների այս աշխատությունը կը ունի նաև համապատասխան մանկավարժական մոտեցում, վորը նկատվում է թե առարկայի շարադրման ընթացքի մեջ, թե նյութերի դաստվորման և թե դեպի ընթերցողն ունեցած մեթոդի մեջ:

Դյուլատնտեսական տեխնիկումները կարիք են զգում գործին այնպիսի մոտեցում ունեցող և այն մեթոդով գրված ձեռնարկի, վորպիսին հեղինակներն են տվել: Այստեղ ուսանողը հետազոտման մեթոդիկայի հետ մեկտեղ ցուցմատւնքներ կստանա տեղի ունեցող բեակ-քիսին մասին, գործիքների կառուցվածքի մասին և աշխատանքասելու ելության մասին:

Տեխնիկումների ուսանողների, տեղական լաբորատորիաների ու մեծ կաթնագործարանների աշխատակիցների համար Մ. Վ. Մասլենիկովի յև Ա. Ի. Սոլնցեվի գիրքը անհրաժեշտ ձեռնարկ եւ:

Պրոֆ. Ալ. Քալանքար

## ՆԱԽԱԲԱՆ

(Հայատառ նրատարակության)

Մ. Վ. Մասլենիկովի և Ա. Ի. Սոլնցեվի գրքի առաջին տպագրության չափազանց շրջառ սպառումը վկայում է այն մասին, վոր գիրքը միովին բավարարել և նման ձեռնարկի առաջ դրված պահանջները:

Կենսական այն պահանջները, վոր յես ցուց ելի տվել ուսական առաջին հրատարակության մեջ, վոչ միայն իրականում բավարարվեցին, այլև մեր սոցիալիստական շինարարության ուժեղ թափը սուր կերպով նորանոր պահանջներ առաջադրեց:

Գրքի գլխավոր նպատակն եր լրացնել այն բացը, վոր առաջադրում եյին գյուղատնտեսական տեխնիկումները: Բայց իրականությունը ցուց է տալիս, վոր նման գրքի պահանջն զգում են վոմիայն գյուղատնտեսական տեխնիկումները, այլև սովորողները, կոլխոզներն ու կաթնատնտեսական ֆերմաները:

Թարգմանության մեջ վորոշ տեղեր ավելի ընդարձակել ենք և մացրել այնպիսի տվյալներ, վոր բացակայում եր ուսւած: Հրատարակության մեջ:

Ավելացրել ենք հետազոտության միջանի այնպիսի ձեռք, վորոնց նպատակն է հայտարերել կաթնամթերքները ապրանքային կողմի պակասությունները: այս հանգամանքը առանձին նշանակություն ունի մեր միջազգային առևտություն մեջ:

Յեթե այս գրքից ոգտվողների կողմից լինեն Խորհրդային Հայաստանի տեղական պայմաններից բղխող հարցեր կամ հատուկ պատճենների մեջ, մեր պարտքը կհամարենք շրջառ հրատարակության մեջ լրացնել:

Պրոֆ. Ալ. Քալանքար

## ԿԱԹԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

ԿԱԹԸ ՅԵՎՆՐԱ. ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Կաթնասուների կաթը, ըստ իրեն քիմիական բաղադրության իրրև բարդ խառնուրդ ջրի և մի շարք նյութերի (սպիտակուցներ, յուղանյութեր, շաքարներ, միներալ աղեր և այլն), վորոնք անպայման անհրաժեշտ են մատղաշ որդանիզմի աճման համար:

Կաթի մեջ գտնվում են չնչին քանակով նաև՝ գազեր, ֆուֆատիդներ և միքանի քիմիական՝ բաղադրություններ (կիտրոնաթթու, խոլեստերին և այլն), վորոնց նշանակությունը կենդանի որդանիզմի համար գեռես լիովին պարզաբանված չեւ:

Վերջապես կթելու ժամանակ միշտ կաթի մեջ ընկնում են բակտերիաներ: Շուկալի կաթի մեկ խորանարդ սանտիմետրի մեջ նրանց քանակը լիբրեմի համարում եւ միքանի տասնյակ միլիոնի:

Գլուզատնտեսական միքանի կենդանիների կաթը, վոր ԽՍՀՄ տարբեր շրջաններում տնտեսական նշանակություն ունի, կաթի միջին քիմիական կազմը տրված եւ 1 աղյուսակում:

Աշօնսակ № 1

Գլուզատնտեսական կենդանիների տեսակները	Տ ռ Կ ո ս ն ե ր ո վ								
	Տեսակ	Կշիռը	Զուր	Զուրթիք	Համար	Կազմի	Աղյուսակ	Կաթի	Աղյուսակ
Կով . . . . .	1,031	87,53	12,47	3,60	2,81 0,54	4,81	0,71	Քեռուիք	
Այծ . . . . .	1,031	87,05	12,95	3,93	2,81 0,75	4,65	0,81		
Վոչխար . . . . .	1,038	82,82	17,18	6,12	4,46 0,98	4,73	0,89		
Զամբիկ . . . . .	1,0310	82,93	11,07	1,66	2,09	6,99	0,28	Մասլենիկով	
Գոմեշ (Դաղստան)	—	81,77	18,23	8,70	3,09 0,428	4,73	0,62	Ոկտագով	

Բացի 1 աղյուսակում նշված հիմնական սննդատու նյութերից՝ սպիտակուցներ, յուղամասեր, ածխաջրեր, միներալ աղեր, վորոնք կազմում են այսպես սասած կաթի «չոր նյութերը», կաթի բաղադրության մեջ մտնում են նաև քիմիական բարդ միացությունների առանձնակի խմբեր, փերմենտներ, վիտամիններ և այլն:

Այս նյութերի մեծ մասը կաթի մեջ գտնվում եւ անշան քանակով: Չնայած զրան, նրանցից միքանիսը (վիտամինները) հսկայական նշանակություն ունեն կենդանիների և մարդկանց առողջ վիճակի և որմալ զարգացման պրոցեսների համար:

Աղջուսակ 2-ում արված ե կովի կաթի քիմիական լրիվ կազմը, շելով նրա բոլոր բաղադրիչները:

Աշխուսակ № 2

Կովի կաթի բաղադրիչները	Տոկոսներով			Մանություն
	Մինիմում	Մաքսիմում	Միջինը	
1. Զուր . . . . .	80,32	90,22	87,27	Տատանման սահմանային կերը արված են ըստ Ֆրեյմանի, Գրիմմերի և ոյլոց Ռուսական կովիրի ճարպի պարունակությունը, բազմաթիվ հեղինակների տվյալներով, վորոշընթացներում հասնում է 8-10%.
2. Ցուղ . . . . .	2,50	4,50	3,50	
3. Սպիտակուցներ՝ ա) կազեին . . . . .	2,0	3,78	3,00	
բ) ալբումին . . . . .	—	—	0,50	
ց) գլոբուլին	—	—	0,00035	ունին
4. Կաթնաշաքար . . . . .	8,00	6,00	4,60	
5. Միներալ աղեր (մուխիլ)	0,6	0,86	0,75	
6. Կիաբոնաթթու . . . . .	0,1	0,27	0,20	G <sub>6</sub> H <sub>7</sub> O <sub>8</sub>
7. Լեցիտին . . . . .	0,04	0,12	0,06	Մինյութեր, փորն իր քիմիական կազմով չափազանց մոտ են լուղանյութերին, և իր մոլեկուլի մեջ պարունակում են ֆոնֆորաթթու:
8. Միդանյութ . . . . .	—	—	0,008	Ալրոմատիկ ալկոհոլ C <sub>27</sub> H <sub>45</sub> OH, փորը սապոնացում չի առաջնում:
9. Խոլեստերին . . . . .	—	—	0,01	
10. Գունավորող նյութեր . . . . .	—	—	—	Կսանտրֆիլ և կաբոտին փոխանցվում են կերպ և տակածն յուղին կերպին գույն լակտոմ-կաթի շիճուկին տալիս և գեղնականաչ գունավորում:
11. Անտիականներ և իմմուն մարմիններ . . . . .	—	—	—	
12. Քաղեր՝ ա) ածխաթթու գաղ . . . . .	5,5	7,3	6,4 սմ <sup>3</sup>	Ծավալային 0 0 0 (ըստ Տերների):
բ) թթվածին . . . . .	0,4	1,1	0,75 >	1) Ոկտիդագները—ողի թթվածինը փոխադրում են պատուիդացող նյութերի: 2) Գերոքսիդացերը ոդմիզացման համար ոդտագործում են արտգ քայլայիղ պերոքսիդների թթվածինը:
ց) աղոս . . . . .	2,3	3,2	2,75 >	1) Ողողուկտազներ—վերականգնեցնում են միջանը ներկեր. 2) Կատալագներ—վերականգնեցնում են ջրածնի պերոքսիդը աղօս արձակությունը մուտքամուրին ջրածնի պարագաները:
13. Ֆերմենտներ՝ ա) ռեսիդացնող . . . . .	—	—	—	
բ) վերականգնողներ . . . . .	—	—	—	

Կովի կաթի բաղադրիչները	Տոկոսներով			Մանություն
	Մինիմում	Մաքսիմում	Միջինը	
դ) հիդրոլիզողներ . . . . .	—	—	—	1) Պրոտեոլիտական ֆերմենտներն առաջազնում են սպիտակուցների քայլայումը: 2) Ամիլիտաները—առաջացնում են պոլիսախարիդների քայլայումը:
14. Վիտամիններ՝ Վիտամին Բին «Բ» . . . . .	—	—	—	Յուլիկում լուծվաներ 1) Կանիսում ե կսերովտալմիթից (աչքի հիվանդացնություն) և հանդիսանում ե աճման ֆակտոր: 2) Հակառախիտային կամ գվուկորի թուլության գեմ:
» «Դ» . . . . .	—	—	—	3) Բազմացման գործոն, նպաստում ե սեռային շրջանի նորմալ զարգացմանը: Զրամ լուծվաներ 4) Կանիսում ե նյարդային համակարգի հիվանդացումը և հանդիսանում ե աճման գործոն:
» «Ե» . . . . .	—	—	—	5) Կանիսում ե ցինդա հիվանդությունը:
» «Վ» . . . . .	—	—	—	
» «Շ» . . . . .	—	—	—	
15. Բակտերիաներ (նայիր կաթի մեջ գտնվող բակտերիանեմասին, յեզ. 50—51):	—	—	—	

ԿԱԹԻ ՖԻԶԻԿԱ-ՔԻՄԻԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԵՎ ՆՐԱ  
ԲԱԿՏԵՐԻՉ ՄԱՍԻՆԸ

Ֆիզիկայի ժամանակակից մեթոդները հնարավորություն են տալիս կաթի մի շարք ֆիզիկական հատկություններ ճշտորեն վորոշել և այդ արտահայտել կորոշ թվական չափերով:

Այդ թվերը կարող են ընթրոշել կաթի տեսակարար կշիռը, սակացման և յերացման աստիճանները, ելեկտրոնադորդականությունը կպչունությունը, կաթի մակերեսային լարվածությունը և այլն:

Գործնական նպատակների համար կաթի ֆիզիկական հատկություններից ամենախոշոր նշանակությունը տեսակարար կշիռը վորոշելն է, նորմալ խառը կաթի տեսակարար կշիռը տատանվում ե չափազանց նեղ սահմաններում (1,028—1,034):

Հիշված մեծություններից այս կամ այն կողմ յեղած շեղումները են հայտ ե բերում կաթի ֆալսիֆիկացիան (կեղծումը), վորի մասին մանրամասն կխոսվի հետագայում:

Ինչ վերաբերում ե կաթի առանձին բաղադրիչ մասերի ֆիզիկական դրությանը, ապա նա չափագանց տարրեր ե և կարելի յե բնորոշել այսպես՝

1. Զուրն այն միջավայրն ե, վորի մեջ դասավորված են մյուս բոլոր բաղադրիչ մասերը:

2. Յուղը կաթի մեջ դասավորված ե գնդիկների ձևով, վորոնց միջին տրամագիծը հավասար է 2-3 մ (միկրոնը =  $1/1000$  միլիմետրի), վորոնք պարզ տեսանելի յեն մի կրոսկոպի տակ (նկար 1). մեկ խո-



րանարդ սիլիստր կաթը միջին հաշվով 3.000.000 յուղագույն գլն զիկ ե պարունակում: Գնդիկները կաթի հեղուկ մասի հետ առաջացնում են այսպես կոչված հմուտսիա: Կաթի մեջ աղատ լողացող յուղի գնդիկները չեն կարող մի մյանց միանալ և խոշոք կաթիներ առաջացնել, վորով հետեւ կաթի հեղուկ մասի և գլնադիկների միջև գործում են մոլեկուլային ձգողական ուժեր: Վորապեսզի յուղի գնդիկները կարողանան միմյանց կպչել, վորով հետեւ կաթի հեղուկ մասի և գլնադիկների միջև գործում են մոլեկուլային ձգողական ուժեր: Վորապեսզի յուղի գնդիկները կարողան միմյանց կպչել, վորով հետեւ կաթի յեղուկ մասի և գլնադիկների միջև գործում են մոլեկուլային ձգողական ուժեր:

Նկ. 1

Դեպքերում (որինակ կաթի յուղակալությունը վորոշելիս) կարեք ե դդացվում կաթի վրա աղլել քիմիական նյութերով, վորոնք նվազեցնում են նրանց մեջ յեղած ձգողական ուժը:

3. Սպիտակուցները 0,005 -ից մինչև 1 միկրոն մեծություն ունեցող մասնիկներ են, վորոնք մասամբ (կազեին) տեսանելի յեն միայն ուլտրամիկրոսկոպով: Այս մասնիկները համաչափ տեղավորված են կաթի հեղուկ մասում, չեն անջատվում ֆիլտրացիայով (քամելով) և չեն անցնում կենդանական ու բուսական թաղանթներով: Նույթերի այսպիսի ֆիզիքական վիճակը կոչվում ե կոլլոփալ:

4. Կաթնաշքար—առանձին մոլեկուլների ձևով:

5. Միներալ աղերը—մոլեկուլների և յոնների ձևով, հաճախ նաև կալցիում վիճակում:

Կաթի առանձին բաղադրիչ մասերի քիմիական հատկություններից անհրաժեշտ ե նշել հետեւյալները:

Կարի սպիտակուցները: Առաջմ կաթի մեջ հալտնաբերված են հետեւյալ 3 տեսակ սպիտակուցները՝

1) կազեին, 2) ալբումին, 3) վորուլին:

Կազեինը քիմիապես մաքուր, ամորֆ փոշու ձևով պատրաստված ջրում լուծելի չե, լուծվում ե ալկալիների, միներալային թթուների, և այլ քիմիապես մաքուր պատրաստված ջրում:

Կազեինը ունի թե թթվալին և թե ալկալալին բեակցիաներ, այդ հատկությունները կախված են կազեինի մոլեկուլում պարունակող թթվային և ամիգալին խմբերից: Պայմանականորեն կազեինի մոլեկուլի կառուցվածքը կարելի յե պատկերացնել այսպես՝ սպիտակուցային բարդ մոլեկուլը նշանակելով R և առանձին գրելով ամիգալին (NH<sub>2</sub>) ու թթվային (COOH) խմբերի փորմուները: այսպես՝ NH<sub>2</sub>—R—(COOH):

Թթվալին բնույթն ավելի ուժեղ ե արտահայտված կազեինի մեջ, քան հիմնայինը: Մեկ գրամ կազեինը չեղոքացնելու համար պահանջվում է 8,1 խորանարդ սանտիմետր զեցինորմալ ալկալի:

Կազեինի մյուս հատկություններից կարելի յե նշել հետեւյալները՝

1) Կազեինը կաթի մեջ գտնվում ե վորպես կալցիումի լուծված աղ: Կազեինի կալցիումական տղի, վորպես հնարավոր սխեմատիկ փորմուլաներից մեկը կարելի յե բերել հետեւյալը՝

NH<sub>2</sub>—R—(COOH)<sub>4</sub> (COO)<sub>2</sub> Ca

2) Թույլ թթուները, խլելով կալցիումը, հեշտությամբ առաջացնում են մաքուր կազեինի սուլակ (կաթը թթվելիս, թանձը կազեինը սուլպվում է):

3) պանրի մակարդի ֆերմենտը, մակարդում ե կազեինը, ըստ որում վերջինս ճեղքվում ե տալով սիճուկային, լուծելի սպիտակուց և թանձը պարակազեին (կամ ինչպես ընդունված ե պանրագործության մեջ ասել՝ «կալցին»): Բայտ քիմիական կազմի կազեինը պարակազեինը համանիշ են:

Այլումբերը հեշտությամբ լուծվում ե ջրում, թույլ ալկալիներում միքանի աղերի լուծություններում և թթուներում: Ալբումինը տարրեր վում ե կազեինից նրանով, վոր իր մոլեկուլի մեջ փոսֆոր չի պարունակում: Ալբումինը չի սուլպվում վոչ թթուներով, և վոչ մակարդով: Նրան կարելի յե ստանալ պանրի սիճուկը մինչև 75° ջելսիուսի տաքացնելով:

Դիօքսիմինը լազ ե լուծվում աղերի չեղոք լուծուլթներում: Ցելուսի 75 -ից բարձր ջերմաստիճանում գործությունը ինչպես և ալբումին շաղկում է: Նրան կարելի յե ստանալ կաթի սիճուկից MgSO<sub>4</sub>-ով վորը սուլպեցնում ե գլոբուլինը:

Կաթնաշքար C<sub>12</sub>H<sub>22</sub>O<sub>11</sub>+H<sub>2</sub>O պատկանում ե դիսախարիդներին և բյուրեղանում ե մեկ բաժին ջրի հետ: Կաթնաշքարի մոլ


O

կուլի մեջ կա ալկենիդային C= խումբը, շնորհիվ վորի նա ընդունակությունը:


նակ և վերականգնեցնել ֆելինգվան հեղուկը: Այս բետակցիայից ոզարշվում են կաթի կաթնաշաքարի քանակը՝ վորոշելիս (բետակցիան մանրամասն նկարագրված է յեր. 83—86):

Կաթնաշաքարը կամ նրա տարրալուծումից ստացված նյութերը ընդունակ են յենթարկվելու տարրեր տեսակի խմբումների:



I Կարնարվային խմորում (կաթը բնականորեն թթվելիս, մածուն, սմեռանա, եքսպրոտի յուղ, նմանապես և մասամբ կեֆիր ու միս պատրաստելիս):




II Ալկոհոլային խմորում (կեֆիր պատրաստելիս)



III Յուղաբրիվային խմորում (առաջանում և կաթնամթերքների փչացման ժամանակ, յերեն կատարվում և պանրի մեջ)



IV Պրոպիոնարրվային խմորում: Հաճախ տեղի է ունենում պանիրների մեջ: Անջատվող ածխաթթու գազը պանրի մեջ առաջացնում է «աչքեր», իսկ պրոպիոնաթթուն և բետակցիայի այլ կոմակի նյութերը հաղորդում են պանրին սպեցիֆիկ սուր համ ու հոտ (խմբման և նյութարկվում կաթնաթթուն),



Կաթնաշաքարը համի տեսակետից ավելի քիչ քաղցրություն ունի, քան ճակնդեղի շաքարը:

Միներալ աղեր: Կաթի միներալային մասի մեջ են մտնում ալկալիական ու ալկալիանոլային մետաղների և աղաթթվի, ֆոսֆորաթթվի ու կիտրոնաթթվի աղերը: Կաթի մեջ միաժամանակ չեղողք և թթու ֆոսֆատների ու ալկալիական մետաղների կարբոնատների գտնվելը, վորոնց մի մասը լակմուսի վրա ազդում ե վորպես ալկալի: Իսկ մյուս մասը վորպես թթու, առաջացնում ե թարմ կաթի լուրաճատուկ ազդեցությունը լակմուսի թղթի վրա՝ կապույտ թուղթը կարմրում ե, կարմիրը կապտում (այսպես կոչված ամֆոտեր բետակցիա): Ըստ Շոլդ-

կաթի միներալային մասերի կազմը

Պարունակ պղերի ընդհանուր համար քաղաքացիությունը	Պղերի մեջ նակարագրված պարունակությունը
0% %	0% %

Նատրիում քլոր NaCl . . . . .	0,0962	10,62
Կալիում քլոր KCl . . . . .	0,0830	9,16
Մետալի ֆոսֆատ $\text{K}_2\text{H}_2\text{PO}_4$ . . . . .	0,1156	12,77
Յերկալի ֆոսֆատ $\text{KH}_2\text{PO}_4$ . . . . .	0,0835	9,22
Կիտրոնաթթու ֆոսֆատ $\text{K}_2\text{C}_6\text{H}_7\text{O}_7$ . . . . .	0,0495	5,47
Յերկմագնի ֆոսֆատ $\text{Mg}_2(\text{HPO}_4)_2$ . . . . .	0,0336	3,71
Կիտրոնաթթու մագնիսիում $\text{MgC}_6\text{H}_6\text{O}_7$ . . . . .	0,0367	4,05
Յերկալցիում ֆոսֆատ $\text{Ca}_2(\text{HPO}_4)_2$ . . . . .	0,0671	7,42
Յետակալցիումական ֆոսֆատ $\text{Ca}_3(\text{PO}_4)_2$ . . . . .	0,0806	8,90
Կիտրոնաթթու կալցիում $\text{CaC}_6\text{H}_6\text{O}_7$ . . . . .	0,2133	23,55
Կազեինի հետ կապված կալցիում . . . . .	0,0465	5,13

Մետաղային աղերի քանակական կազմը փոփոխվում և կախված՝ լակտացիոն շրջանից, կերակրումից, տավարի ցեղից: Կաթնատու կուգերի վորոշ հիվանդությունների դեպքում միներալ աղերի կազմը կաթի մեջ առանձնապես սուր չափերով և փոխվում (աղի կաթ):

Կաթի մյուս բազալտութիչ մասերի (ֆերմենտներ, վիտամիններ և այլն) նշանակությունը և դերը համառոտ կերպով նշված են 8 և 9 ենթերի աղյուսակում:

Յուղալին մասի քիմիական հատկությունների մասին տես յերես 81—85:

### ԿԱԹԻ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կաթի ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ և հաշվի առնել, վոր նրա հատկությունները և բազալտությունը չափազանց մեծ տառանություններ են առաջացնում՝ կախված մի շաբթ գործուներից տավարի ցեղից, լակտացիայի շրջանից, կերերից, մաքուր կթելուց, կենցանու հասակից ու առողջությունից և այլն:

1. Տափարի ցեղի ազդեցությունը: Կաթի քիմիական կազմի փոփոխությունները կապված տավարի ցեղի հետ, գլխավորապես վերաբերում են կաթի մեջ պարունակող լուրաճատուկ մասին. Կաթի մյուս բաղդրիչ մասերը համեմատաբար քիչ են փոփոխվում: № 4 աղյուսակում տրված և տարբեր ցեղերի կովերի կաթի միջին բաղդրությունը:



Միայն ստիճաները մինչև ցցամաքելը կթելով, մենք հնարավորություն ունենք ստանալ նորմալ քանակով յուղ և չոր նյութեր պարունակող կաթ:

Բացի վերը նշված գործոններից, մի շաբթ այլ պատճառներ ևս ազգեցություն են ունենալու կաթի քիմիական բաղադրության և հատկությունների փոփոխման վրա: Այսպիս՝ ստիճաների տուրերկուզողով հիվանդանալն առաջացնում ե կաթնաշաքարի, կրի և ֆուֆորաթթվի նվազում և ավելացնում ե՝ ազոտական նյութերի, քլորի ու նատրիումի ընդհանուր քանակը, մաստիտով վասավելը (ըստ Ամերիկերի) առաջ ե բերում ալբումինի, գլոբուլինի և քլորի ավելացում, իսկ կաթի բեակցիան փոխվում ե ալկալիականի: Կովի հասակի ազգեցությունը կաթի կազմի վրա նկատվում ե յուղի պարունակության աստիճանաբար անկաման մեջ (Վինկեր):

### ԿԱՌԻ ՖԻԶԻԿՈ-ՔԻՄԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ

#### Միջին նմուշի վերցնելը

Կաթնայուղի այն հատկության հիման վրա, վոր նա հանդիսացվի ձակում ընդունակ ե տալ սերուցքի շերտ, անհրաժեշտ ե կաթը լավ խառնել, նախքան անալիզի համար նմուշ վերցնելը:

Առանձին խառնիչով (շերեփով) խառնելով կաթը, նրանից վեր են առնում հարկավոր քանակը և չոր շիզ լցնում: Շիշ ետիկետի վրա (թթվի վրա) անմիջապես նշանակում են կովի համարը, կամ անունը, կթի ժամանակը (առավոտ, կեսոր, յերեկո) և ամսաթիվը:

Կաթի որական կիթի միջին կազմը վորոշելու համար պետք է կազմել մի միջին նմուշ՝ վերցնելով յուրաքանչյուր կիթից հարաբերական քանակով կաթ:

Որինակ՝ ունենք յերեք կիթ՝ առավոտայն—9 լիտր, կեսորին—6,5 լիտր, յերեկոյան—4,5 լիտր:

Լրիվ անալիզի համար անհրաժեշտ ե վերցնել առնվազն 200 լիուրանարդ սանտիմետր կաթ: Ամեն մի լիտր կաթից վերցնում ենք 10 լիուրանարդ սանտիմետր կաթ և լցնում մի ընդհանուր շիշ մեջ՝ առաջին կիթից—90 լիուրանարդ սանտիմետր, յերկրորդից—65 լիտր, սանտիմետր, յերերրորդից—45 լիտր. սանտիմետր: Ընդամենք ունենք 200 լիտր սանտիմետր միջին նմուշի կաթ:

Ցեթ պահանջվում ե կաթի մեջ միայն յուղը վորոշել, առանց տեսակաբար կշիռը գորոշելով, կաբելի և ամեն մի լիտրից վերցնել միայն 2 լիուրանարդ սանտիմետր կաթ, այսինքն՝ առաջին կիթից—18 լիտր, սանտիմետր, յերկրորդից—13 լիտր. սանտիմետր, յերերրորդից—9 լիտր, սանտիմետր, ընդամենը 40 լիուրանարդ սանտիմետր:

Ցուղագործարաններում մասսայական մատակարարողներից կաթ ընդունելու դեպքում, միջին նմուշ վերցնելու համար ավելի գործնա-

կան և ըագ, միևնույն ժամանակ բավականաչափ ճիշտ միջոց ե գործ ածված, յուրաքանչյուր կաթ մատակարարողից ամեն որ նմուշ վերցնելն առանձին ապակի խողովակով, վորի արամագիծը (ներսից) մոտ մեկ սանտիմետր եւ:

Խողովակը, կաթը ընդունելու դուրսի մեջ իջնեցնելիս լցվում ե կաթի սիստեմ, վորի բարձրությունը կախված ե դուրսի մեջ յեղած կաթի քանակից: Աջ ձեռքի ցուցամատով փակելով խողովակի վերին ծալը (անցքը), կաթով լցցված խողովակը հանում են դուրսից և չափված կաթը դատարկում նախորոք պատրաստած շահ մեջ:

Այսպիսով յուրաքանչյուր կաթ մատակարարողից ամեն որ 10-15 որվա ընթացքում նմուշներ են վերցնում: Վարպետի նմուշներ չփառանան, ավելացնում են վորեն կոնսերվացնող նյութ, որինակ՝ յերկրողաթթու կալի: Այս ձեռքի կաթի նմուշը վերցվում ե ամսական յերկու անգամ, ըստ վորում առանց վորեն հավելյալ հաշվումների, սահմանված կոնտրոլ ժամանակաշրջանի համար ստանում են յուղի միջին տոկոսը:


#### ՆՄՈՒԾՆԵՐԻ ԿՈՆՍԵՐՎԱՑՈՒՄԸ

Ցեթե կաթը մնալու յե կարճ ժամանակ (մեկ որ), կարելի յե բավականանալ շերեփ սարցատուն դնելով: Իսկ յեթե կարիք ե զգացվում նմուշներն անալիզի համար պահել 1-2 շաբաթ, ապա անհրաժեշտ ե նրանց ֆորմալինով ( $\text{HC}\diagdown\text{O}\diagup\text{H}$ ) կամ յերկրողաթթու կաթիումով ( $\text{K}_2\text{Cr}_2\text{O}_7$ ) կոնսերվացնել: Կոնսերվացնող նյութերն անցնելով բակտերիաների թաղանթանյութը (բջջաթաղանթ), ազդում են նրանց պրոտոպլազմալի վրա, վորպես ուժեղ ոգուկացութիչ ( $\text{K}_2\text{Cr}_2\text{O}_7$ ), կամ սպիտակուցների հետ քիմիական միացություններ առաջացնող

( $\text{H}-\text{C}\diagdown\text{O}\diagup\text{H}$ ), վորոնց հետևանքն ե լինում միկրոբների կենսունակությունը կաթի մակարումը:

Ցեթերում կաթիումով կախումով կանսերվացնելը: 100 լիուրանարդ սանտիմետր կաթին բավական ե ավելացնել 5-10 կաթիլ (0,5-1 լիուրանարդ սանտիմետր) 10 տոկոսային  $\text{K}_2\text{Cr}_2\text{O}_7$  լուծույթ յերկու շաբաթ պահպանելու համար, Ցեթերում աթթաթթու կաթիումով կոնսերվացը կաթի միայն յուղը կարելի յե վորոշել<sup>1)</sup>:

1) Ցեթե ցանկանում են վորոշել կաթի նաև տեսակարար կզիր, պետք է պատրաստել  $\text{K}_2\text{Cr}_2\text{O}_7$  5 տոկոսային լուծույթ, վորի աթսակարար կզիրը 1,032 և հավասար կաթի միջին տեսակարար կզիրն:



ՖՈՐՄԱԼԻՆՈՎ կոնսերվացիոնը, կաթի կոնսերվացման համար գործադրվում ե վաճառքում յեղած 37 տոկոսային ֆորմալինը:

100 խորանարդ սանտիմետր կաթին բավական ե ավելացնել 2—3 կաթի ֆորմալին՝ յերկու շարաթ պահպանելու համար:

Ավելի մեծ քանակությամբ ֆորմալին վերցնելը խոչնդում ե հանդիսանում կաթի յուղը վորոշելուն, վորովհետև ֆորմալինը կաթի սպիտակուցների հետ առաջացնում ե թթուների մեջ դժվար լուծվող միացություններ:

Ֆորմալինով կոնսերվացնելիս տեսակաբար կը իռը չի փոփոխվում:

Կոնսերվացրած կաթի նմուշների թթվությունը վորոշել չի կարելի, վորովհետև ինչպես  $\text{K}_2\text{Cr}_2\text{O}_7$  նույնազն և  $\text{HCOH}$  կաթի թթվությունը ավելացնում են:

### ԿԱԹԻ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

(Որգանոլեպտիկ)

Կաթի ուսումնասիրությունը պետք ե սկսել արտաքին հատկություններից, ըստ վորում անհրաժեշտ ե ուշադրություն դարձնել.

- 1) Կաթի գույնին,
- 2) » խտության վրա,
- 3) » համին<sup>1)</sup>,
- 4) » հոտին (արոմատ):

Նորմալ կաթը, նայած նրա մեջ յեղած յուղի քանակին, ունենում ե գեղնա-կամ կապտա-սպիտակ գույն, միահավասար նոսր կոնսիստենցիա (խտություն), յուրահատուկ թեթև հոտ և գուրեկան քաղցր համ:

Յերբեմն կաթի մեջ յեղող պտկասությունները հաճախ վերաբերում են նրա համին և հոտին և սակայ դեպքերում միայն գույնին ու կոնսիստենցիալին:

Պակասություններ կարող են առաջանալ չափազանց տարբեր պատճառներից՝ կերերից, բակտերիաներից, կովերի հիվանդություններից, ամանեղնի անմաքրությունից և այլն:

Արդարական շատ բուլսեր՝ (շաղղամրուկ) (*Brassica rapa oleifera DC.*) յավան (Artemisia absynium), վալրի սոխ (Allium schoenoprasum կամ ursinum), սխտորուկ (teucrium scordium<sup>2)</sup>) կաթին հաղորդում կամ դառնություն և շաղղամի կամ սխտորի հոտ Փչացած կերերը

1) Կոնսերվացրած կաթի համի գնահատումը չի կարելի կատարել:

2) Artemisia, Allium և teucrium ցեղերին պատկանողները չայտասանում բաղմականի յեն և չափազանց չատ ըստ Ս. Ա. Գրոսհոյմի միայն ալիքում ցեղի 38 տեսակներ կան չայտասանում:



(բորբոսնած, տղպած և այլն) կաթին կարող են հաղորդել անդուրնամ:

Կերերից առաջացած բոլոր այս պակասությունները սովորաբար հայտաբերվում են կաթը կթելուց անմիջապես հետո: Բակտերիական ծագում ունեցող պակասությունները՝ ձգվող կոնսիստենցիա, կապույտ, կտրմիր կաթը, սապոնի կամ դառը համը—առաջանում են կաթի վատ խնամքի ընթացքում:

### ԿԱԹԻ ԹԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՈՇԵԼԸ

Կաթի թարմության և մաքրության վորոշելը խոշոր նշանակություն ունի վոչ միայն կաթն անարատ վիճակում գործադրելու և սպառելու համար, այլև զանազան կաթնամթերքներ վերամշակելու համար: Գոյություն ունեն կաթի մաքրության և թարմության աստիճանը վորոշելու բաղմաթիվ յեղանակներ՝ հիմնված տարբեր սկզբունքների վրա: Մենք կնկարագրենք նրանցից ամենաեականները:

Կարի կեղտի վարուելը: Մի հայտնի չափի կաթը քամում են բամբակի փոքրիկ քամիչների միջով: Քամիչի մեջ մնացած կեղտից գա-



Նկ. 2—3

Չափար են կազմում կաթի հարաբերական կեղտուության մասին:

Գործիքներ՝

- 1) Կեղտորոշիչ «Ռեկորդ» (նկար 2 և 3)
- 2) Կեղտորոշիչ «Հուանդիա» (նկար 4 և 5)


Կեղտի վարուելը «Ռեկորդ» գործիքով

1) Բամբակե ֆիլտրը (քամիչ) դնել գործիքի շենքին և հատուկ սեղմիչներով ամրացնել նրան՝ հաստատելով գործիքը պատվանդանում այնպես, ինչպես ցույց ե տրված 2 նկարում:

2) Գործիքի տակը դնել աման կամ բաժակ և 500 սմ<sup>3</sup> կաթ լրցնել (յեթե կաթը սառն ե, լավ ե մի փոքր տաքացնել քամվելու պրոցեսի արագացնելու համար):

3) Քամվելուց հետո աղատել բամբակի ֆիլտրը սեղմիչներից, հանել և դիտել ֆիլտրի վրա նստած կեղտը:

4) Կաթի մեջ պարունակվող կեղտի կշիռը վորոշելու համար նախորդ պետք ե բամբակե ֆիլտրը չորացնել 100°C և կշռել. Կաթը քամելուց հետո կեղտոտ ֆիլտրը կրկին անդամ չորացնում են 100°C



Նկ. 4-5

և նորից կշռեմ. Առաջին և յերկրորդ կշռների տարրերությունով գտնում են կաթի մեջ չեղած կեղտի կշիռը:

Կեղտի վորուելի Հոլանդիա գործիքով

1) Մետաղյա ցանցերը, բամբակե շրջանները և ուստինե ողերը (նկար 4) տեղափորել գործիքի կափարիչի բների մեջ.

2) Ճնշող մեքենան վեր բարձրացրած միսոցով հազցնել բնի մեջ (նկար 5):

3) Ճնշող մեքենայի մեջ կաթը հատուկ չափով լցնել միսոցի մեջ և միսոցը ճնշելով, կաթը դուրս մղել:


Կարի բրկուրյան վորուելի: Նոր կթված, թարմ կաթը տալիս է ալսպես կոչված «ամֆոտերային» բեակցիա (ալսինքն ըստ կակուսի միաժամանակ տալիս և թե թթվային և թե ալկալիական բեակցիաներ):

Բայց այս յերեսութք արագ կերպով անհայտանում և չնորհիվ կաթնաթթվային բակտերիաների գործունելության, վորոնք կթելու ժամանակ ընկնելով կաթի մեջ, կարող են չափազանց մեծ փոփոխություններ առաջացնել:

Նրանց ներգործությունը կաթի վրա սխեմատիկորեն կարելի յեպատկերացնել այսպես՝

1) Կաթնաթթվային բակտերիաների կենսագործներության ուղեկ-

ցում և կաթնաթթվային խմորումը, այսինքն կաթնաշաքարի փոխանցումը կաթնաթթվի:



2) Առաջացած կաթնաթթուն աղեկելով կաթի կաղեինի կալցիումի վրա, մակարդում ե կաթը:

$2\text{C}_3\text{H}_6\text{O}_3 + \text{Ca} \rightarrow (\text{C}_3\text{H}_4\text{O}_2)_2\text{Ca} + \text{Կաղեին}$  (վորպես թանձը մածունանան նյութ):

Կաթի թթվության աստիճանի հաշվառումը գործնականում վերին աստիճանի խոշոր նշանակություն ունի կաթի հետ կատարվող բոլոր գործողությունների համար (անարատ կաթ վաճառելիս, պանրագործության և այլն) և կարելի յս կատարել միքանի չեղանակով:

Թեորեների յեղանակը. Կաթի թթվության աստիճանը վորոշվում է 100 սմ<sup>3</sup> կաթի չեղոքացման համար գործադրված  $\frac{1}{10}$  նորմալ ալկալիի խորանարդ սանտիմետրների քանակով, Վորպեսզի ավելի պարզ նկատվի չեղոքացման ռեակցիայի ափարտումը (վարդագույն գունավորման տերևալը), կաթը նոսրացնում են դիստիլատ (թորած) ջրի սահմանափակ քանակով և ավելացնում են  $\text{Ca(OH)}_2$  կաթի ֆենոֆտալեյին:

#### Գործիքներ՝

1. Մոռի բյուրետ.

2. Երկնմեկերի կոլբա կամ 300 սմ<sup>3</sup> տարողությամբ բաժակ.

3. 10 և 20 սմ<sup>3</sup> պիպետներ:

#### Բեակտիվներ

1. Նեցինորմալ ալկալի ( $\text{NaOH}$  կամ  $\text{KOH}$ )

2. 5 տոկոսային ֆենոլֆտալեյին (5 գր. ֆենոլֆտալեյին, 95 սմ<sup>3</sup> ալկոհոլ)

#### Հետազոտման ընթացքը

1) Չափելի լցնել 10 սմ<sup>3</sup> կաթ երկնմեյերի կոլբայի մեջ, ավելացնել 20 սմ<sup>3</sup> ջուր և 3 կաթի ֆենոլֆտալեյին լուծույթ:

2) Կոլբան թափահարելով, բյուրետկալից զգուշությամբ լցնում են  $\frac{1}{10}$  նորմալ ալկալին և անդադար խառնում, մինչև վոր կաթը թուլ վարդագույն գունավորում ստանա, վորը չպետք ե անհայտանալ  $\frac{1}{2}$  ըուղելի ընթացքում:

3) Գործադրած ալկալիի քանակի խորանարդ սանտիմետրներով, բաղմապատկած 10-ով, կստանանք կաթի թթվությունը թեորների աստիճաններով (համառոտ °T):

Սոկոլես-Հենիկելի յեղանակը. Վորոշելու սկզբունքը նույն ե, ինչ և թեորների յեղանակինը, տարբերությունը միայն գործադրվող ալ-

կալիք նոսրության մեջ ե (ըստ Սոկուհետ-Հենկելի վերցնում են  $\frac{1}{4}$  նորմալ ալկալի), իսկ կաթի նմուշը փորձի ժամանակ ջրով չեն նոսրացնում:

Գործիքներ՝ նույն են ինչ և թեորիաների լեղանակի համար:

Բեակիլիներ՝ 1)  $\frac{1}{4}$  նորմալ ալկալի ԿՕՀ կամ ՆաՕՀ:  
2) ֆենոլֆտալին:

Հետազոտման ընթացքը՝

1) 300 մմ<sup>3</sup> տարողությամբ երկնմեյերի կոլբալի մեջ չափել 50 մմ<sup>3</sup> կաթ, ավելացնել 1 մմ<sup>3</sup> ֆենոլֆտալինի  $2^{\circ}/_0$  լուծույթ և ափառի յենթարկել՝ մինչև թույլ վարդագույն գունավորում ստանալը:

2) Գործադրած ալկալի քանակը խորանարդ սանտիմետրներով բազմապատկել 2-ով, ստացված արտադրյալը կաթի թթվությունն և Սոկուհետ-Հենկելի աստիճաններով (համառոտած  $S-H$ ) SH մեկ աստիճանը հավասար է 2,5  $\circ$  T:

Թրվուրյան հաօվելը կարնարրի հանակավ. Միքանի լերկը ներկներում կաթի, սերուցքի և այլ մթերքների թթվության մասին դատում են վոչ թե թթվության աստիճաններով (թեորների կամ Սոկուհետ-Հենկելի), այլ կաթնաթթվի քանակով: Այդ թիվը ստանալու համար, N  $\frac{10}{10}$  ալկալի (թեորների աստիճանների) խորանարդ սանտիմետրի քանակը պետք է բազմապատկել 0,009-ով: Որինակ, լեթե ըստ թեորների հայտնաբերված է  $18^{\circ}$  թթվություն, ապա կաթնաթթվի քանակը կվորովի  $18 \times 0,009 = 0,162$  գր. 100 մմ<sup>3</sup> կաթի մեջ:

Ալկոհոլային նմուռ: Թարմ կաթին վորոշ խտության ալկոհոլ ավելացնելիս կաթի կազեինը չի անջատվում: Թթվությունը, վորոշ աստիճանի հասնելիս, նույն ալկոհոլը կաթի կազեինը շաղում և փաթիլների ձեռք: Փորձերով սահմանված է կաթի թթվության և ալկոհոլի խտության հետևկալ հարաբերությունը, վորն առաջացնում է կազեինի փաթիլների ձեռք անջատում:

Ալկոհոլի խտությունը  
ըստ թթվալինի

72°

70°

68°

60°

52°

Կազեինը շաղվում է թեորների  
սատ. թթվության դեմքում

$16^{\circ}$  թեորների

$19,5-20^{\circ}$  »

$20-22^{\circ}$  »

$23^{\circ}$  »

$25^{\circ}$  »

Ալկոհոլի ըստ թեորների  $20^{\circ}$ -ից ցածր թթվություն պարունակող կաթը առաբերելու համար պետք է գործադրել ըստ Տրալինի  $68^{\circ}$  ալկոհոլ:

Բեակիլիներ՝ ըստ Տրալինի 68° ալկոհոլ (0,896 տեսակաբար կշռով):

Հետազոտման ընթացքը՝

1) Փորձանոթի մեջ լցնել 5 մմ<sup>3</sup> կաթ:

2) Ավելացնել նույն ծավալով ալկոհոլ:

3) Բութ մատով ծածկել փորձանոթի բերանը, միքանի անգամ թափահարել շրջել գեղի վեր և դիտել փաթիլների բնույթը:

Փաթիլների բացակայության դեպքում կաթը թարմ է, խոշոր փաթիլները ցուցանիշ են կաթի չափազանց բարձր թթվածության:

ԱԴՅՈՒՏԱԿ Հ 7

Կարի վարակը ըստ բրվածուրյան

Թթվությունը	Ալկոհոլային փորձ	
	Ըստ թեորների ակար	Ըստ Սոկուհետ հենկելի
1. Թարմ կթած կաթը .	16—18°	6,5—7,5°
2. Վահանոքի, նորմալ կաթը . . . . .	20—21°	8—8,5°
3. Վող կաթը . . . . .	24—27,5°	10—11°
4. Ինքնիրեն մերժող կաթը . . . . .	62,5—75°	25—30°

Ներկայում չեն սահմանափակվում կաթի միայն մաքրության և թարմության փիղիկա-քիմիական գնահատման մեթոդներով: Հավելալ բականորոշութեական կոնտրոլը հնարավորություն և տալիս վորոշել կաթի բակտերիաներով վարակվածության աստիճանը և սահմանել ստիճաների առողջ կամ հիվանդ լինելը:

### ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇՐԻ ՎՈՐՈՇԵԼ

Կաթի տեսակաբար կշիռը կարելի յի վորոշել միայն կթելուց 4—5 ժամ անց, վորոշիտեակաթից անմիջապես հետո, առաջին ժամերին կաթի տեսակաբար կշիռը յենթարկվում է փոփոխման, կապված մամանակ կաթի յուղագնդիկների փիղիկական դրության մեջ կատարվող փոփոխության հետ (գերպաղած-հեղուկ դրությունից ամուր դրության անցնելը):

Տեխնիկական նպատակների համար տեսակաբար կշիռը վորոշում են արեսմետրով, գիտական նպատակների համար՝ վեստֆալ-Մորի կշեռքով կամ պիկոնոմետրով: Սընոմետրը (նկար 16) կազմված է 1) ա-

պակյա, մեջը դատարկ մարմնից, վորը ծառայում է վորպես լողալու փամփուշտ (ոռոլավօք), 2) փամփուշտի տակին գտնվող զնդանման մասից, վորտեղ լցրած և արձճի կոտորակ կամ սնդիկ, վորպեսպի արեսմետրը կաթի մեջ վերտիկալ (ուղղաձիգ) դրության մեջ լողա և 3) վերևի նեղ խողովակից, վորի մեջ կա ցուցանակ կամ ձևկալար գծիկներով կամ «աստիճաններով» 15° ից մինչև 40° Սկալայի (աստիճանացույց) այս թվերը համապատասխանում են տեսակաբար կշռի մեծության հարցուրերորդական և հաղարերորդական մասերին: Որինակ լեթե

արեսմետրի նշան թիվը և՝ 320, ապա կաթի տեսակաբար կշռը հավասար կինը 1,032:

Այնքան, վորքան վոր կաթի տեսակաբար կշռը, ինչպես և մյուս բոլոր մարմինների տեսակաբար կշռը, ջերմաստիճանից փոփոխվում է, արեսմետրի ցույց արված՝ «աստիճանները» տրված են նորմալ  $15^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի համար: Վորեն պատահական ջերմաստիճանում տեսակաբար կշռը վորոշելու համար ( $10-25^{\circ}\text{C}$  սահմաններում) արեսմետրը իր վերին մասում ունի ջերմաչափ: Արեսմետրի տվյալները արագ կերպով նորմալ ջերմաստիճանի տեսակաբար կշռի միավորների վերածելու համար անհաժեղութեամբ և իմանալ տվյալ կաթի և նորմալ ջերմաստիճանի մեջ յեղած տարրերությունը: Հետո նորմալ ( $15^{\circ}\text{C}$ ) ջերմաստիճանից ամեն մի ավելորդ աստիճան համար արեսմետրի ավյալին ավելացնել  $0,2^{\circ}$ .

Նկ. 6



Նկ. 7

լեթե ջերմաստիճանը  $15^{\circ}\text{C}$  -ից ցածր ե, ամեն մի ցածր ջերմաստիճանի համար պակասեցնել  $0,2^{\circ}$ :

Արեսմետրի արդեն ուղղած տվյալների վրա հարկավոր ե ավելացնել ևս  $0,2^{\circ}$  («մեխիսկի» ուղղումն), վորովհետեւ կաթի մակերես և արեսմետրի խողովակի և կաթի ջիման կետում առաջանում ե կաթի մակերեսի չնշին բարձրացում: Հաշվումը կատարելով կաթի և սկալայի հատման գծով, մենք փաստորեն իրականի հանդեպ մի փոքր պակաս թվանշան ենք հաշվի առնում: Վորովհետեւ համախ արեսմետրից ոգտվում են անարատ և լեռները քաշած կաթերի ջրով կատարած փալմիֆեկացիան (կեղծիքը) հայտաբերելու համար, ապա խառնած ջրի մոտավոր քանակը հաշվելու համար, արեսմետրների միքանի տեսակների նեղ մասի վրա լինում են թվանշանների լեռներ շարք, վորովներ նշում են մոտավոր պես կաթի ջրով նորացած լինելու աստիճանը:

ճանը (դեղինը—անարատ կաթի համար, կապույտը լեռներ կաթի համար):

Դործիթներ՝

1. Ապակյա բարձր գլան:
2. Քենանի արեսմետր:

Հետազուման լեռբացիք՝

1) Լավ խառնել կաթի միջին նմուշն այնպես, վոր փրփուր չառաջանա, բարձր գլանի պատերով կաթը լցնել գլանի մեջ, աշխատելով, վոր կաթը գլանում և չփրփրի:

2) Զգուշությամբ արեսմետրը իջեցնել կաթի մեջ մինչև 20 թվականն ու թողնել ագատ:

3) Յերբ արեսմետրը միքանի տատանումներից հետո ընդունի կալուն դիրք, կատարել լեռկու չափում՝ ա) արեսմետրի աստիճանը կաթի մակերեսի հատման գծով, բ) ջերմաչափի ցուցմունքները:

4) Տեսակաբար կշռը նորմալ  $15^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի բերելու համար կատարել համապատասխան հաշվումներ:

1 ՈՐԻՆԱԿ. Արեսմետրը նշել և՝ 31,2,

կաթի ջերմաստիճանը  $18^{\circ}\text{C}$ .

Ջերմաստիճանների տարբերությունը՝  $18^{\circ}-15^{\circ}=3$ .

Ուղղումն ըստ ջերմաստիճանի  $+3 \times 0,2=0,6$ .

Ուղղումն ըստ մենիսկի  $+0,2$ :

Արեսմետրի նշումներն ուղղումներով՝  $30,2+0,6+0,2=32,0$ , ուրեմն կաթի տեսակաբար կշռը՝ 1,032:

2. ՈՐԻՆԱԿ. Արեսմետրը նշել և՝ 30,6.

կաթի ջերմաստիճանը  $11^{\circ}\text{C}$ .

Ջերմաստիճանների տարբերությունը՝  $11^{\circ}-15^{\circ}=-4^{\circ}$ .

Ուղղումն ըստ ջերմաստիճանի  $-4 \times 0,2=-0,8$ .


Ուղղումն ըստ մենիսկի  $+0,2$ :

Արեսմետրի նշումներն ուղղումներով՝  $30,6+0,2-0,8=30,0$ , ուրեմն կաթի տեսակաբար կշռը՝ 1,030:

Արեսմետրի նշումներն ավելի արագ ու ճիշտ նորմալ ջերմաստիճանի տեսակաբար կշռի վերածելու համար ոգտվում են հատուկ աղյուսակից:

Պրոֆ. Յալանթարի արեսմետրի (նկար 7) վրա այս ուղղումները ուղղակի նշված են. նա այնպես և կառուցված, վոր ջերմաչափի սկալան վոչ թե ջերմաստիճաններ են նշում, այլ ուղղումներ, այսինքն՝ այնտեղ, վորտեղ ջերմաչափը պետք է ցույց տա  $15^{\circ}$ , դրված ե 0, վորը պարզ կերպով ասում է, վոր այստեղ վոչ մի ուղղումն չի պահանջվում, այստեղ դրված է կաթիքը զի՞ծ: Մնդիկի այս զի՞ց բարձր նշան բոլոր թվերն անհաժեղ ե գումարել արեսմետրի նշումներին:

Այս թվից ցածը գրվածները պակասեցվում են արեոմետրի նշան թվերից: Այսպիս, ինթե արեոմետրը տիել է 28,5, իսկ սոդիկը 1,7 զերոից բարձր, ապա արեոմետրի իրական նշումը կլինի 28,5+1,7=30,2 այլ կերպ ասած՝ կաթի տեսակաբար կշիռը հավասար է 1,0302 (նկար 7):



Նկ. 8.



Նկ. 9.

Հետազոտվող կաթի տեսակաբար կշիռը վորոշ դեպքերում հնարավորություն ե տալիս ուղղակի վորոշել ֆալսիֆիկացիայի բնույթը: Խառը նորմալ կաթը 15°C ունենում է 1,028-ից մինչև 1,034 տեսակաբար կշիռ, միջինը 1,032 ըստ վորում ծայրագույն թվերը հազվագյուտ են: Կաթի յերեսը քաշելուց նրա տեսակաբար կշիռը մեծանում է, վորովինետև կաթի ամենից թեթև մասը հեռացվում է: Կաթի յուղը չափազանց շատ քաշելուց, ինչպես այդ լինում ե սեպարատորով սերը զատելով ժամանակ, սովորաբար նրա տեսակաբար կշիռը մեծանում է մինչև 1,035—1,037: Հակառակ յերեսությունը կդիտելի՞նք, յեթե կաթը նոսրացնենք ջրով: Զուրը վորպես ավելի թեթև հեղուկ, կաթի տեսակաբար կշիռը կպակսեցնի, ըստ վորում յուրաքանչյուր  $10^{\circ}/_0$  ջուր ավելացնելը տեսակաբար կշիռը պակսեցնում է 3: Այսպիս, որինակ: յեթե նորմալ կաթն ունի  $32^{\circ}$  տեսակաբար կշիռ, ապա  $10^{\circ}/_0$  ջուր ավելացնելու դեպքում կաթի տեսակաբար կշիռը կիշնի  $29^{\circ}, 20^{\circ}/_0$  ջուր խառնելու դեպքում— $26^{\circ}$  և այլն: Բայց միայն տեսակաբար կշիռի վորոշելը հնարավորություն չի տալիս դատել կաթի նորմալ լինելու մասին, վորովինետև միաժամանակ թե կաթի սերուցքն անջատելով (տեսակաբար կշիռ մեծացում) և թե ջուր խառնելով (տեսակաբար կշիռ պակասեցում) կարելի յի ստանալ նորմալ տեսակաբար կշիռ, մինչդեռ կաթը


կլինի կրկնակի կեղծված (տես նկար 10, 11, 12): Այսպիսի կը բնակի Փալսիֆիկացիայի լենթարկված կաթի կեղծիքը հալտարերելու մասին տես հետազում:



Նկ. 10



Նկ. 11




Նկ. 12

Թթված կաթի տեսակաբար կշիռը (x) կարելի յի վորոշել միմեայն կաղեինի մակարդված մասը լուծելուց հետո: Դրա համար կաթի 100 ծավալին խառնում են 10 ծավալ ուժեղ ամմոնիակ, վորի տեսակաբար կշիռը նախորոք հայտնի յի (d), խառնուրդը թափահարում են մինչև վոր կաղեինի փաթիլերը լուծվեն և հետո վորոշում են տեսակաբար կշիռը: Հաշվումները կատարում են հետեւյալ գորմուլայով՝  $x = \frac{11 \times d_1 - d}{10} - 0,001$ , վորտեղ  $d_1$  կաթի և ամմոնիակի խառնուրդի տեսակաբար կշիռն է:

#### ԿԱԹԻ ՑՈՒՂԻ ՎՈՐՈՇԵԼԸ

Գերբերի բրվային մերողը: Ուժեղ ծծմբաթթվով աղղելով կաթի վրա նրա սպիտակուցները լուծվում են. կաթի կաղեին կալցիումալին




Նկ. 13

աղի կալցիումն անջատվում ե վորպես  $\text{CaSO}_4$ . կաթի հեղուկ մասի և

յուղային գնդիկների միջև յեղած ձգողական ուժը խախտվում է և յուղային գնդիկները հեշտությամբ կարելի լեփանջատել կենուրոնախույս մեքենայի միջոցով. յուղային գնդիկների միաժանց մոտենալուն,

կպչելուն և խոշոր կաթիւներ առաջացնելուն նպաստում ե ամիլո-ծծմբային եթերը, վորը ստացվում ե ամիլ ալկոհոլի և ծծմբթթվի խառնուրդից: Յուղը վորոշելիս կատարվող քիմիական ըեակցիաների ընթացքը սինմատիկ ձևով կարելի յի այսպես ներկայացնել:


### 1. Սպիտակուցների լուծվելը՝



Նկ. 14.

$2\text{H}_2\text{SO}_4 + \text{Ca} \text{կաղեին} = \text{CaSO}_4 + \text{կաղեին}$ .  $\text{H}_2\text{SO}_4$  (լուծվող միացություն):

### 2. Ամիլո-ծծմբային եթերի առաջանալը՝



Յուղի վորոշումը կատարվում ե առանձին խողովակներում, վորոնք կոչվում են բուտիրումետրներ:

### Գործիքներ՝

1. Ավտոմատ կամ  $\text{H}_2\text{SO}_4$ -ի պիպետ 10 սմ<sup>3</sup> համար (նկար 8 ձախ և 9 աջ).

2. Ավտոմատ կամ կաթի պիպետ 11 սմ<sup>3</sup> համար (նկար 10).

3. » » ամիլ-ալկոհոլի պիպետ 1 սմ<sup>3</sup> (նկար 8 աջ և 9 ձախ).

4. Բուտիրումետր (նմուշների քանակով (նկար 9)).

5. Զրի բաղնիս ջերմաչափով (նկար 11).

6. Կենուրոնախույս մեքենա (նկար 13).

7. Բողեացուց.

8. Բուտիրումետրների պատվանդան (նկ. 14).

Բեակիվներ՝

1. Ծծմբաթթու 1,81—1,82 տեսակարար կշռով:

2. Ամիլ ալկոհոլ ( $\text{C}_5\text{H}_{11}\text{OH}$ ):



Նկ. 15

Նետազուման լիթրացիք՝

1) Բուտիրումետրը լցնել հետևյալ հաջորդականությամբ.  
ա) 11 սմ<sup>3</sup>  $\text{H}_2\text{SO}_4$ .

բ) 12 սմ<sup>3</sup> կաթ, աշխատելով չխառնել կաթը ծծմբաթթվի հետ, այդ հանարակոր ե, յեթե կաթի շիթը բաց թողնեն ըուտիրումետրի ներսի կողեքով<sup>1)</sup>:

շ) 1 սմ<sup>3</sup> ամիլ ալկոհոլ:

2) Բուտիրումետրները փակել ուստինե հատուկ խցաններով:

3. Բութ մատով սեղմելով խցանը, բուտիրումետրները թափահարել, մինչև զոր սպիտակուցները լիովին լուծվեն (բուտիրումետրն ուժեղ տաքանում ե):

4. Այս ձևով պատրաստած բոլոր բուտիրումետրներն ընկցմե 65°C ջրաբաղանիքի մեջ և թողնել ալիսեղ 3—5 րոպե (յեթե բուտիրումետրները շատ են և լցնելու ընթացքում նրանք սառչում են):

5. Բուտիրումետրները դասավորել կենուրոնախույս մեքենայի հատուկ բների մեջ՝ խցանները դեպի պերիֆերիա (դուրս). Բուտիրումետրները կենուրոնախույս մեքենայում պետք ե լինեն դասավորված սիմետրիկ, ըստ արամագծերի իրար դեմ առ դեմ: Յեթե բուտիրումետրների քանակը կենտ ե, ապա սիմետրիայի համար նրա դիմացը պետք ե մտցնել մեկ ավելորդ, մաքուր ջրով լցրած բուտիրումետր:

6. Բուտիրումետրները 3—5 րոպե պլոտել. կենուրոնախույսի միջին արագությունը լինելու յի 800—1000 պլոտել՝ մեկ րոպեյում: Պտուլտների արագությունը վորոշվում ե գործիքի թիկ պտույտների քանակով կամ հատուկ հաշվիչով, վորն ամրացվում ե կենուրոնախույսի առանցքին:

7. Կենուրոնախույսից հետո բուտիրումետրները 3—5 րոպե տեղագրում են 64°C ջրաբաղանիքում:

8. Բուտիրումետրի սկալայով կատարել հետազոտվող կաթի յուղային տոկոսի հաշվում: Այդ աշխատանքի համար յուղի սյան ստորին յեղը, խցանը սեղմելով կամ թուլացնելով, հասցնում են ամբողջ թվերի մոտակա գծերից մեկին, նկատելով միաժամանակ նրա վերին գողավոր յեղը, մենիսկի դիրքը, վորոշում են բուտիրումետրի սկալայի քանի գծիկն ե զրագում յուղի սյունակը: Ակալայի ամեն մի մեծ բաժանումը համապատասխանում ե կաթի մեջ յիղած յուղի 10% ին (նկար 15 և 16):

Այլ «մերով»: Կաթի սպիտակուցները լուծելու համար գործադրվում ե հատուկ ալկալիական լուծույթ, վորը խախտում ե կաթի հեղուկ

1) Յուղն ըստ գերբերի վորոշելին, պետք ե բուտիրումետրը լցնել նշված հաջորդականությունը պահպանելով: Հակառակ դեպքում, յերբ ամիլ-ալկոհոլն անմիջապես խառնվում ե ուժեղ ծծմբաթթվին, առաջանում են թթու լուծաբթում չլուծվող պրոցեսներ (ամիլին և այլն), վորոնք փոխադրվելով լուղային շերտի մեջ, տալիս են քարձրացման հետևանքներ:

մասի և յուղային գնդիկների միջև գոլություն ունեցող ձգողական ուժը: Ճարպացին գնդիկները կենտրոնախույս ուժի ազդեցության տակ արագ կերպով՝ միմյանց կացնելուն և խոշոր կաթիլներ առաջացնելուն նպաստում ե բզրութիւնը ( $C_4H_9OH$ ), վորից մի փոքր քանակ լիցնում են բուտիրումետրի մեջ:

Կազեինի լուծվելու ընթանում և հետեւյալ սխեմայով՝

Կազեին  $Ca + 2NaOH = Ca(OH)_2 + Na_2$  կազեին (լուծելի միացություն):

#### Գործիքներ՝

1. «Սալ» լուծույթի համար 11 սմ<sup>3</sup> պիպետ.
2. Կաթի համար 10 սմ<sup>3</sup> պիպետ.
3. Իզորոտիլ ալկոհոլի համար 0,6 սմ<sup>3</sup> պիպետ.
4. Բուտիրումետրներ (նմուշների քանակով).
5. Ջրաբաղանիք ջերմաչափով.
6. Կենտրոնախույս.
7. Պատվանդան.

#### Թեակտիվներ՝

1. «Սալ» լուծույթ<sup>1)</sup>:
2. Իզորոտիլյան ալկոհոլ:

#### Հետազոտման ընթացք՝

- 1) Բուտիրումետրը լցնել հետեւյալ հաջորդականությամբ՝
  - ա) 11 սմ<sup>3</sup> «Սալ» լուծույթ.
  - բ) 10 սմ<sup>3</sup> կաթ (զգուշությամբ, բուտիրումետրի կողերով):
  - գ) 0,6 սմ<sup>3</sup> իզորոտիլյան ալկոհոլ.
  - դ) Բուտիրումետրները փակել ունենան հատուկ խցաններով,

նկ. 16.

#### Խցաններով,

3) Բուտիրումետրների պարունակությունը թափահարել, մինչ վոճակակուցները լիովին լուծվեն:

4) Բոլոր բուտիրումետրները 3—5 բոպե ընկում 45°C ջերմաստիճանից վոչ բարձր ջրաբաղանիք (45°C ավել ջրաբաղանիքը տաքացնել չի կարելի, վորովհետև ավելի բարձր ջերմաստիճանում լուզը կարող է սալունանալ, վորից վորոշման ձարակությունը կխախտվի):

5) Բուտիրումետրները դնել կենտրոնախույսի մեջ (տես թթվային յեղանակը):

6) 3—5 բոպե բուտիրումետրները պատել կենտրոնախույսի մեջ:

1) «Սալ» լուծույթը և ներկած իզորոտիլ ալկոհոլը վաճառվում են պատրաստիկ ձևություններում: Այս պարագային յեթե անհրաժեշտ ե ըսալը լուծույթն ինքնուրույն պատրաստել, կարելի յե ոգտակալ պրոֆ. Դյակովի սեցեպտից, ըստ վորի մեկ լիտր ջրում լուծում են 160 գրամ  $NaOH$ , 40 գրամ սեղնեյան աղ, 10 գրամ  $NaCl$ ,





7) Կենտրոնախույսից հետո 3—5 բոպե բուտիրումետրները դնել 45°C ջրաբաղանիքի մեջ:

8) Բուտիրումետրների սկալայով կատարել յուղի տոկոսի հաշվումը:

Եկապեղիցին ուսումնասիրությունների, կաթնատվության կոնկուրսների նմուշների համար, շրջելու դեպքերում և ալլն գործադրում են հատուկ համբորդական արկղներ, կենտրոնախույս փոքրիկ սեղներ (նկար 17):


ՍՊԻԾԱԿՈՒՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿԻ ՎՈՐՈՇԵԼԸ  
(Բա Կ'ել'դալի)

Կաթն ուժեղ ծծմբաթթվի հետ սնդիկի կամ պղնձագասպի ներկայությամբ լեռացնելիս, կաթի սպիտակուցները և մյուս որգանական



Նկ. 17.

մասերը քայլակում են, քայլքական պլուզուկտները մասամբ ցնդում են, վորպես  $CO_2$ , իսկ ամբողջ ազոտը, վորն առանձնանում և վորպես



Նկ. 18.

ամռնիակ, ծծմբաթթվի հետ առաջացնում է ամռնիում ծծմբական աղ: Հետո կծու ալկալի ազդեցությամբ ամռնիակը դուրս է մղվամ, վորը թթված և կանխորոշված ծավալով  $^{1/10}$  նորմալ ծծմբաթթվով վորոշում: Վորոշելով, քանի խորանարդ սանտիմետր  $^{1/10}$  նորմալ ծծմբաթթու յի կապված ամռնիակի հետ, հեշտ և հաշվել վերցրած կաթի կշռամասի մեջ դանվող ազոտի քանակը, լիթե հայտնի լի, վոր յուրաքանչյուր խորանարդ սանտիմետր  $^{1/10}$  նորմալ  $H_2SO_4$  համապատասխանում է 0,0014 գրամ ազոտի (նկ. 18):

Վարպետություն, արված կշռամասի աղոտը վերածենք սպիտակուցների, պետք ե ազոտի քանակը բազմապատկենք 6,45 գործակցով (ընդունելով, վոր սպիտակուցների մեջ պարունակվող աղոտը համար ե 15,5%):

#### Գործիքներ՝

1. Կաթը կշռելու համար հղկած խցանով բաժակ:
2. Կ'ել'գալի գործիք (նկար 18):
3. Սնդիկը չափելու համար կաթիլաթափ շիշ:
4. Բյուրետ պատվանդանով և Երենմեյերի 500 սմ<sup>3</sup> կոլբաներ:

#### Թեակիլներ՝

1. Քիմիապես մաքուր, կոնցենտրիկ  $H_2SO_4$ , տեսակարար կ2իու 1,84
2. Սնդիկ (կամ քիմիապես մաքուր  $CuSO_4$ ):
3. Պարաֆին:
4. 33% NaOH լուծույթ:
5. Ցինկի փոշի:
6. Պեմզա:
7. 1/10 նորմալ  $H_2SO_4$ :
8. 1/10 նորմալ NaOH:
9. Մեթիլ-որանժ կամ ըոզուան թթու:

#### Հետազոտման ընթացք՝

Կարի այրելիր ուժեղ  $H_2SO_4$  մեջ, ֆիլիապես մախուր  $CuSO_4$  կամ սնդիկի ներկայությամբ (վարյես կատալիզատոր):

1. Հղկված խցանով բաժակի մեջ ածել կաթ և կշռել:
- 2) Կ'ել'գալի հատուկ կոլբայի մեջ լցնել կշռած բաժակից մոտավորապես 5 սմ<sup>3</sup> կաթ:
- 3) Բաժակը կրկին կշռել և կշիռների տարբերությունով վորոշել կոլբայի մեջ լցրած կաթի կշռը:
- 4) Կաթի մեջ լցնել 20 սմ<sup>3</sup> կոնցենտրիկ  $H_2SO_4$ , ավելացնել 1 կաթիլ սնդիկ (կամ մեկ գրամ  $CuSO_4$ ), իսկ փրփուր առաջանալը և կոլբայից դուրս շպրտելը կանխելու համար մի փոքրիկ կտոր պարփին:

- 5) Կոլբան տաքացնել կրակի վրա (ձգող պահարանի մեջ) սկըզբում զգուշությամբ, իսկ հետո ուժեղացնելով ալրոցի բոցը: Հեղուկը յեռացնել մինչև նրա լիովին պարզելը: Ալրումն արագացնելու համար կարելի յե դանակի ծայրով ավեացնել մի փոքր  $K_2SO_4$ ,
- 6) Կոլբան թողնել, վոր սառչի:

7. Մի փոքր դիստիլատ ջուր կոլբայի կողերով զգուշությամբ ներս լցնել և այնքան թափանարել կոլբան, մինչև վոր սուզակը լուծվի հեղուկի մեջ:

8) Կոլբայի մեջ պարունակվող նյութը դատարկել թորելու հատուկ կոլբայի մեջ: Առաջին կոլբան մէքամ ջրի փոքրիկ բաժիններով լավ վողողել և ամեն անգամ վողողվածքը զգուշությամբ դատարկել թորման կոլբայի մեջ: Թորման կոլբան մինչև կեսը ավելցնել դիստիլատ ջրով:

Ամենինիակի աղերի ֆայֆայելը յել ամմոնիակումի բորելը

1) Թորելու համար սարքել կ'ել'գալի հատուկ թորման գործիքը: Երենմեյերի 500 սմ<sup>3</sup> տարողությամբ կոնսածել կոլբայի մեջ լցնել 50 սմ<sup>3</sup> 1/10 նորմալ  $H_2SO_4$  և հետեւ, վորպեսզի թորման խողովակի ծայրը սուզված լինի  $H_2SO_4$  մեջ:

2) Ամմոնիում աղերը քայքայելու նպատակով, կ'ել'գալի թորման կոլբայի մեջ լցնել 80 սմ<sup>3</sup> NaOH և դառակի ծայրով նույն կոլբայի մեջ զցել ցինկի փոշի ու պեմզա:

3) Լցված թորման կոլբան արագ կերպով միացնել թորման գործիքի հետ, վառել ալրոցները և ջրային գոլորշների հետ միասին դուրս մղել ամմոնիումը 1/10 նորմալ  $H_2SO_4$  պարունակող ընդունիչ կոլբայի մեջ:

4) Համոզվելով, վոր թորած հեղուկի կաթիլց լակմուսի թուղթը չի կապտում (այսինքն ամբողջ ամմոնիակը թորված ե), տիտրի լինթարկել ընդունող կոլբայի պարունակությունը 1/10 նորմալ NaOH-ով մեթիլ-որանժի կամ ըօզուաթթվի (վարպես ինդիկատոր—ցուցիչ) ներկայությամբ:

#### Հաշվումներ՝

- 1) Վերցված 5 գրամ կշռամաս:
- 2) Ընդունող կոլբայի մեջ լցրված ե 1/10 նորմալ  $H_2SO_4$  50 սմ<sup>3</sup>
- 3) 1/10 նորմալ  $H_2SO_4$ -ի մնացորդը տիտրի լինթարկելու համար գործադրված ե 1/10 նորմալ NaOH . . . . . 31,5 սմ<sup>3</sup>

մնում ե ամոնիակի հետ կապված 1/10 նորմալ  $H_2SO_4$ ...18,5 սմ<sup>3</sup>

- 4). Կշռամասի մեջ պարունակվող աղոտի քանակն ըստ հաշվումի կինքի:

$$18,5 \times 0,004 = 0,0259 \text{ գրամ:}$$

- 5) Կշռամասում յեղած սպիտակուցի քանակը՝

$$0,0259 \times 6,45 = 0,167$$

6) Սպիտակլուցների տոկոսը կաթի մեջ

5 գր—0,167

$$x = \frac{0,167 \cdot 100}{5} = 3,34\%$$

100—x

### ԿԱԶԵԻՆԻ ՎՈՐՈՇԵԼԸ

(Մաստիոպուլոյի մերողը)

Կաթի կազեինը, վորպես թթվալին բնուցթ կրող միացություն, իր չեղոքացման համար վորոշ քանակով ալկալի և պահանջում: Հիմնվելով այս փաստի վրա դեցինորմալ ալկալիով տիտրի են լենթարկու կաթի, ջրի և թռող ծծմբաթթվի հատուկ ձեռք պատրաստած լուծույթ: Միենուցն ծավալի լերկու խառնուրդներից մեկի կազեինը նախորոք լիովին հեռացվում եւ Պարզ է, վոր լերկու խառնուրդներից կազեին պարունակողը իր չեղոքացման համար ավելի մեծ քանակով ալկալի կործադարձի, քան առանց կազեինի խառնուրդը: Տարբերությունը ցույց եւ տալիս, թե վորքան ալկալի լեռ դործադրվել կաթի խառնուրդի վեցըրքած ծավալում յեղած կազեինը չեղոքացմանը համար: Իմաստով, թե քանի գրամ կազեինին եւ համապատասխանում 1 սմ<sup>3</sup> 1/10 նորմալ ալկալին, վերջինին քանակով հաշվում են կաթի մեջ յեղած կազեինի քանակը: 1 սմ<sup>3</sup> 1/10 նորմալ NaOH ըստ Մաստիոպուլոյի կարող եւ չեղոքացման 0'11315 գրամ կազեին:

### Գործիքներ՝

1. 500 սմ<sup>3</sup> տարողությամբ երկնմեյերի լերկու կոլրա:
2. Բյուրեա:
3. Ֆիլտրով ձագար:
4. 100 սմ<sup>3</sup> չափանշանով կոլրա:
5. 20 սմ<sup>3</sup> պիպետ.
6. 100 սմ<sup>3</sup> չափելու դլան.

### Բեակիմեյեր՝

1. 1/25 նորմալ H<sub>2</sub>SO<sub>4</sub>.
2. 1/10 նորմալ NaOH.
3. 5% ֆենոլ ֆտալեին:

### Հետազոտման ընթացքը

1) Ճեղտ ստուգված պիպետով լերկու երկնմեյերլան կոլրաների մեջ չափել քսանական խորանարդ սանտիմետր կաթ և ութունական խորանարդ սանտիմետր դիստիլատ ջուր:

2) Կոլրաներից մեկի մեջ ըլուրետից կաթ-կաթ ածել 1/25 նորմալ H<sub>2</sub>SO<sub>4</sub> անընդհատ թափահարելով կոլրան, մինչև վոր կազեինը խոշոր գութիւնների ձեռք սկսվի անջատվել կաթից: Սովորաբար այդ աշխատանքում ե 23—30 սմ<sup>3</sup> թթու:

3) Թթվի նույնալիսի քանակ, ինչպիսին պահանջվեց առաջին կոլրանի կազեինը չեղոքացմանը համար; միանդամից լցնել լերկորդը կոլրայի մեջ:

4) Առաջին կոլրայի պարունակությունը սովորական ֆիլտրի միջոցով քամել 100 սմ<sup>3</sup> տարողությամբ չափանիշով կոլրայի մեջ: Ֆիլտրի վրա մնաց կազեինը, ֆիլտրատի մեջ խառնուրդի մյուս ըոլոք մասերը: Խոտիզ հետեւ, վորպեսզի ֆիլտրատը միանդաման պարզ լինի:

5) Ֆենոլֆտալեինի (ինդիկատոր) ներկալությամբ տիտրի յենթարկել 1/10 նորմալ ալկալիով լերկորդը կոլրայի պարունակությունը մինչև թույլ գարդագույն գունավորումը և գրի առնել գործադրած պակալիի ծավալը:

6) Վերցնել առաջին կոլրայի պարզ ֆիլտրից 100 սմ<sup>3</sup> ֆենոլֆտալեին ավելացնելով, տիտրի յենթարկել 1/10 նորմալ ալկալիով, տիտրի համար գործադրված ալալիի քանակը (խորանարդ սանտիմետրներով) նշանակել:

### Հաշվումներ

1-ին կոլրա: 20 սմ<sup>3</sup> կաթ+80 սմ<sup>3</sup> ջուր+24 սմ<sup>3</sup> 1/10 նորմալ H<sub>2</sub>SO<sub>4</sub>=124 սմ<sup>3</sup> խառնուրդ:

2-րդ կոլրա: 20 սմ<sup>3</sup> կաթ+80 սմ<sup>3</sup> ջուր+24 սմ<sup>3</sup> 1/10 H<sub>2</sub>SO<sub>4</sub>=124 սմ<sup>3</sup> խառնուրդ:

2 րդ կոլրայի (կազեինով) խառնուրդի չեղոքացման համար (124 սմ<sup>3</sup>) գործադրված ե 1/10 նորմալ NaOH=13 սմ<sup>3</sup>

1-ին կոլրայի 100 սմ<sup>3</sup> ֆիլտրատը (կազեինից զուրկ) չեղոքացմանը համար գործադրված ե 1/10 նորմալ NaOH=7 սմ<sup>3</sup>:

Հետեւապես առաջին կոլրայի (առանց կազեին) 124 սմ<sup>3</sup> ֆիլտրատի չեղոքացման համար կործադրվի 1/10 նորմալ NaOH  $\frac{7 \times 124}{100} = 8,68$  սմ<sup>3</sup>,

20 սմ<sup>3</sup> կաթի մեջ պարունակվող կազեինի չեղոքացման համար կործադրվի 1/10 նորմալ NaOH 13—8,68=4,32 սմ<sup>3</sup>:

20 սմ<sup>3</sup> կաթի մեջ պարունակվող կազեինի կշիռը=4,32×0,11315=0,488808,

$\frac{100 \text{ սմ}^3 \text{ կաթի } \text{մեջ } \text{պարունակվող } \text{կազեինի } \text{կշիռը}=0,488808 \times 5=2,44 \text{ գրամ:}$

Վորովհետև 100 սմ<sup>3</sup> կաթը (1,032 տեսակարար կշռով) կշռում է 103,2 գրամ, ապա վորպեսզի կաթի մեջ յեղած կազեինի տոկոսը վրա բոշենք 100 սմ<sup>3</sup> կաթի մեջ պարունակվող կազեինի գտած թիվը բանում ենք կաթի տեսակարար կշռի վրա:

$$\text{Կազեինի} \quad \text{տոկոսը} = \frac{2,44}{1,032} = 2,36\%$$

### ԱԼԲՈՒՄԻՆԻ ՎՈՐՈՇԵԼԸ

Կաթի վորոշ ծավալից կամ կշռամասից, թույլ քացախաթթվով անջատում են կազեինը և կազեինը միանգամայն անջատելու համար հեղուկի միջով անց են կացնում CO<sub>2</sub>, մնացորդը քամելով, թափանցիկ ֆիլտրատը յեռացնում են մինչև ալբումինի լիովի անջատվելը. անջատված ալբումինը հավաքում են նախորոք կշռում ֆիլտրի վրա, չորացնում են և կրկին անդամ կշռում:

### Գործիքներ՝

1. 600 սմ<sup>3</sup> տարողությամբ յերեք կոլբաներ:
2. 20 սմ<sup>3</sup> պիպետ:
3. 500 սմ<sup>3</sup> տարողությամբ չափելու գլան:
4. Բլուրետ:
5. Կիպարի գործիք:
6. Ֆիլտրով ձագար:

### Բեակտիվներ՝

1. 50<sup>0</sup> քացախաթթու:
2. Ածխաթթու գազ:

### Հետազոտման ընթացք՝

- 1) 600 սմ<sup>3</sup> տարողությամբ կոլբայի կամ բաժակի մեջ չափելու 20 սմ<sup>3</sup> կաթ և 400 սմ<sup>3</sup> ջուր:
- 2) Խառնուրդի մեջ, անընդհատ ապակյա ձողով խառնելով, կթիներով ածել քացախաթթու, մինչև կազեինի փաթիլերի առաջալը:
- 3) 20-30 րոպե կիպարի գործիքից հեղուկի միջով անցկացնել թույլ հոսանք:
- 4) Կազեինը քամելով անջատել:
- 5) Միանգամայն թափանցիկ ֆիլտրատը յեռացնել մինչև ալբումինի փաթիլերի անջատվելը (մոտ 30 րոպե):
- 6) Նախորոք չորացրած և կշռած ֆիլտրով քամել ստացված բումինը:

7) Ալբումինը և փիլտրը չորացնել մինչև կայուն կշռություն կար:

8) Ալբումինի մաքուր կշռությունը վերահաշվել կաթի 100 գրամի հանդեպ:

### ԿԱԹՆԱՉԱՔԱՐԻ C<sub>12</sub>H<sub>22</sub>O<sub>11</sub> ՄՈԼԵԿՈՒԼԻ ՄԵՋ պարունակվում եւ ալգե-

զիզային խումբ —  $\text{C}=\overset{\text{O}}{\diagdown}\overset{\text{H}}{\diagup}$ , վորի ջնորհիվ կաթնաչաքարը կարող է պղնձի հիղոքսիդը վերականգնել պղինձ դիոքսիդի:

Յեթե կաթի թափանցիկ սիճուկի վորոշ քանակը խառնենք պղնձի ոքսիդային առանձին աղի հետ (Փելինգյան հեղուկը)<sup>1)</sup>, ապա խառնուրդը յեռացնելիս բավական արագ (6 րոպե) բեակցիա լի կատարվում կաթնաչաքարի և ֆելինգյան հեղուկի միջն:

Յեակցիաների հետեւանքով անջատվում ե պղինձ դիոքսիդի C<sub>12</sub>O վառ կարմիր սուզակը այնպիսի քանակով, վորը ճիշտ համապատասխան լուծույթում պարունակվող կաթնաչաքարին:

Վորոշելով դիոքսիդի սուզակի մեջ յեղած մաքուր պղնձի (Cu) քանակը, հասուկ աղջուսակով գտնում ենք կաթի սիճուկից վերցրված ծավալի մեջ պարունակվող կաթնաչաքարի համապատասխան քանակը: Այսպիսսվ կաթի մեջ յեղած կաթնաչաքարի քանակը պարզելու համար անհրաժեշտ ե՝

1) Կաթի հայտնի քանակից ստանալ կաթի թափանցիկ սիճուկ:

2) Սահմանել քամուկունի (KMnO<sub>4</sub>) տիտրը, վորպեսզի վորոշվի պղինձ դիոքսիդի սուզակում յեղած մաքուր պղնձի քանակը:


3) Կաթի սիճուկի վորոշակի մասը Փելինգյան հեղուկի հետ յեռացնել և ստանալ պղինձ դիոքսիդի (Cu<sub>2</sub>O) սուզակը:

1) Յելինգյան հեղուկի պատրաստելը՝

1-ին լուծույթ՝ 34,63 գրամ քիմիապես մաքուր բյուրեղային CuSO<sub>4</sub> լուծել գիստիւս ջրում, մինչև վոր ընդհանուր ծավալը հասնի 500 սմ<sup>3</sup>:

2-րդ լուծույթ՝ 51,6 գրամ NaOH լուծել 100 սմ<sup>3</sup> ջրում և 173 գրամ սեղնեայան աղ լուծել 400 սմ<sup>3</sup> գիտիւս ջրում: Գործադրելուց որաց յերկու լուծույթներից հավասար ծավալներով լցնել, ըստ վորում կատարվում ե հեակալ բեակցիաները՝

1) 2 NaOH + CuSO<sub>4</sub> = Na<sub>2</sub>SO<sub>4</sub> + Cu(OH)<sub>2</sub> → պղինձ հիդրօքսիդ – կապատգույն առւզակ, վորը 1-ին և 2-րդ լուծույթները խառնելու առաջին մոմենտին ե առաջանալու:



Անջատված պղնձի ղերքսիդի (Cu<sub>2</sub>O) սուլակում վորոշել մաքուր պղնձի քանակը և հատուկ աղյուսակներով գտնել նրան համապատասխանող կաթնաշաքարի քանակը:

Գործիքներ՝

1. 500 սմ<sup>3</sup> չափի կոլբա:
2. Պիպետներ 5, 10, 25 և 50 սմ<sup>3</sup>:
3. Ֆիլտրով ձագար և 500 սմ<sup>3</sup> երենսկերի կոլբա:
4. Երենսկերի 300 սմ<sup>3</sup> յերեք կոլբա:
5. Զրահոս ող ծծող գործիքին հարմարեցրած աղբեստի Փէլտր<sup>1)</sup>:
6. Մոռի բյուրեաներ:

Բեակիլիներ՝

1. 34,63 գրամ CuSO<sub>4</sub> լուծույթ 500 սմ<sup>3</sup> ջրում:
2. 10,2 գրամ NaOH լուծույթ մեկ լիտր ջրում:
3. Ցրտում հագեցված NaF լուծույթ (30 գրամ 500 սմ<sup>3</sup> ջրում):
4. Ֆելինգլան հեղուկ.
5. 5 գ, KMnO<sub>4</sub> լուծույթ մեկ լիտր ջրում:
6. տիտրը վորշելու համար թրթնչկաթթուամմոնիում (NH<sub>4</sub>)<sub>2</sub>C<sub>2</sub>O<sub>4</sub>KMnO<sub>4</sub>:
7. Քիմիապես մաքուր, ուժեղ H<sub>2</sub>SO<sub>4</sub>.

8. Յերկաթոքսիդի ծծմբաթթուատի լուծույթ՝ կլոել 50 գրամ

յերկաթոքսիդ, ածել լիտրանոց (չափանշանով) կոլբայի մեջ, ավելացնել 750 կուր. սմ ջուր, 200 գրամ կոնցենտրիկ H<sub>2</sub>SO<sub>4</sub> և լցնել մինչեւ

1) Աղբեստի ֆիլտրը (նկար 19) պատրաստում և այսպիս:


1) Աղակայս հատուկ խողովակը ( $\frac{1}{2}$ —2 սմ տրամադով), 10—12 սմ յերկարությամբ, ներքեւ ձգված նեղ մասը 5—7 սմ, վերջինս ներքին տրամագիծ  $\frac{1}{2}$ — $\frac{3}{4}$  սմ) անցկացնել ծծող կոլբայի բկին հարմարեցրած խցանի մեջ:

2) Խողովակի լոյն մասի հատակը դնել յերկարաթել աղբեստ կամ ապակա բամբակա:

3) Կուլբան միացնել ջրահոս ծծող գործիքի հետ, փոքրիկ բարակում մի փոքր կարճաթել աղբեստ (յեթե պատրաստի չկա, յերկարաթել աղբեստի փնջից զանակով մի քիչ քերել) խառնել ջրի հետ և մանր մասերը թափելով, խառնութեց փոքր բաժիններով լցնել խողովակի մեջ, թողնելով ծծող մեքենայի թույլ հոսանք:

4) Ստացված շերտի միջով քամել թափած մանր մասերը:

5) Աղբեստի ամբողջ շերտի հաստությունը պետք է լինի մոտ մեկ սանտի-



Նկ. 19.

նշանագիծը ջուրի գործադրելուց առաջ լուծույթին ավելացնել միքանի կաթիլ KMnO<sub>4</sub> մինչև վոր լուծույթն ստանա թույլ վարդագույն գունավորում:

Հետազոտման լինացքը՝

Կարնասինուկի պատրասելը

1) Ստույգ պիպետով չափել 25 սմ<sup>3</sup> կաթ և լցնել 500 սմ<sup>3</sup> տարողությամբ չափագծով կոլբայի մեջ:

2) Կոլբայի մեջ ավելացնել՝

ա) 400 սմ<sup>3</sup> դիստիլատ ջուր:

բ) 10 սմ<sup>3</sup> CuSO<sub>4</sub>-ի լուծույթ (1)

գ) 6—7 սմ<sup>3</sup> NaOH-ի լուծույթ (2) { սպիտակուցներն անջատելու համար:

դ) 20 սմ<sup>3</sup> NaF-ի լուծույթ (3)

(ձայրահեղ դեպքում կարել յել վարպետ կատարել աղերն անջատելու համար: Վարպետ կատարել առանց NaF) { Ca-ի աղերն անջատելու համար:

3) Կոլբան փակել խցանով, խառնուրդը թափահարել և թողնել 30 րոպե հանդիսավոր վիճակում:

4) Կոլբան լրացնել դիստիլատ ջրով ճիշտ մինչև չափագիծը:

5) Կոլբայի պարունակությունը թափահարելով, քամել նրա մեջ պարունակվող կաթի թափանցիկ սիճուկը:

Քամելենի տիտրի փորուելը

Վորոշման տվյալ խնդիրն այն է, վորպեսզի վորոշի, թե քանի միլլիգրամ պղնձին և համապատասխանում 1 սմ<sup>3</sup> քամելենը:

Թամելենի տիտրի վորոշումը կատարում են թթնչկաթթուամոնիակով [(NH<sub>4</sub>)<sub>2</sub>C<sub>2</sub>O<sub>4</sub>] և հիմնված եթերի ծծմբաթթու գիռքսիդի քամելենով ոքսիդացնելու բեակիցիալի (2-րդ հավասարեցում) հիման վրա, նմանապես և պղնձ գիռքսիդի սուլֆակի, ծծմբաթթու յերկաթի ծծմբաթթուամբարաստած լուծույթում լուծվելու ժամանակ կատարվող բեակիցիալի հիման վրա (3-րդ հավասարեցում):

1-ին հավասարեցում.  $2\text{KMnO}_4 + 5(\text{NH}_4)_2\text{C}_2\text{O}_4 + 3\text{H}_2\text{SO}_4 = 10\text{CO}_2 + 2\text{MnSO}_4 + \text{K}_2\text{SO}_4 + 8\text{H}_2\text{O}$ .

2-րդ հավասարեցում.  $2\text{KMnO}_4 + 10\text{FeSO}_4 + 8\text{H}_2\text{SO}_4 = 5\text{Fe}_2(\text{SO}_4)_3 + 2\text{MSO}_4 + \text{K}_2\text{SO}_4 + 8\text{H}_2\text{O}$ .

3-րդ հավասարեցում.  $\text{Cu}_2\text{O} + \text{Fe}_2(\text{SO}_4)_3 + \text{H}_2\text{SO}_4 = 2\text{FeSO}_4 + 2\text{CuSO}_4 + \text{H}_2\text{O}$ .

1-ին և 2-րդ հավասարեցումներից լեռնում ե, վոր քամելեռնի հավասար քանակները ոքսիդացնում են 2 բաժին  $(\text{NH}_4)_2\text{C}_2\text{O}_4$  և 10 բաժին  $\text{FeSO}_4$ , կամ ըստ քամելեռնի ոքսիդացման մեկ բաժին  $(\text{NH}_4)_2\text{C}_2\text{O}_4$  համապատասխանում ե լեռկաթի, 3 բդ հավասարեցումից բղյում ե, վոր ամեն յերկու առում լեռկաթին համապատասխանում ե 2 առում պղինձ:

Ալպինով այս յերեք հավասարեցումների հիման վրա կարելի յեսհամանել վոր ըստ քամելեռնի ոքսիդացման՝

1 մոլեկուլ  $(\text{NH}_4)_2\text{C}_2\text{O}_4$  համապատասխանում ե — $2\text{Fe} \rightarrow \text{համա-}$  և ասսխանում ե — $2\text{Cu}$ .

(Մոլեկուլային կշռը 142,1)  $(2 \times 63,6 \text{ մոլեկուլային կշռ)$   
կամ անցնելով քանակական հարաբերության, կարելի յե գրել՝

$$142,1 \rightarrow 2 + 63,6,$$

ո գրամ  $(\text{NH}_4)_2\text{C}_2\text{O}_4 \rightarrow \text{X գրամ Cu}$ ,

$$\text{հետեւաբար X գրամ Cu} = \frac{2 \times 63,6}{142,1} \times n = 0,8951 \times n \text{ գրամ},$$

վորտեղ ո—թթնջկաթթու ամոնիումի կշռամասն ե:

Հետազոտման ընթացքը՝

1. Երեսմեյերյան 300 սմ<sup>3</sup> անոց կոլբայի մեջ ճիշտ կշռել, վոր պիլ 0,25 գրամ թթնջկաթթու ամոնիում,
2. Ավելացնել նույն կոլբայի մեջ՝
  - 60 սմ<sup>3</sup> յեռացող դիստիլատ ջուր
  - 1—2 սմ<sup>3</sup> ուժեղ, քիմիապես մաքուր  $\text{H}_2\text{SO}_4$  1—2 սմ<sup>3</sup> (զգուշ),
3. Քամելեռնի լուծույթով տիտրի յենթարկել մինչև թուլ վարդագույն գունավորումը:

Հաշվելու արինակներ՝  $(\text{NH}_4)_2\text{C}_2\text{O}_4$  կշռամասը — 0,21 գրամ:  
 $0,21 \text{ գրամ } (\text{NH}_4)_2\text{C}_2\text{O}_4 \text{ համապատասխանում } \times$   
 $0,21 \times 0,8951 = 0,188 \text{ գրամ պղնձի:}$   
 $(\text{NH}_4)_2\text{C}_2\text{O}_4$  տիտրի յենթարկելու համար գործարված է 21 սմ<sup>3</sup>  $\text{KMnO}_4$ .

$$\text{քամելեռնի տիտրը } \text{ըստ պղնձի} = \frac{0,188}{21} = 0,009 \text{ գր. Cu}$$

արինքն 1 սմ<sup>3</sup> քամելեռնը համապատասխանում  
 $\times 0,009 \text{ գր. Cu:}$

Պղինձ բիոխիդի (Cu<sub>2</sub>O) սուզակ սանալը

Հետազոտման ընթացքը՝

1) Ճիշտ պիպետկայով սուզացված թափանցիկ սիճուկից չափել 50 սմ<sup>3</sup> և ածել 300 սմ<sup>3</sup> տարողությամբ երլենմեիերյան կոլբայի մեջ.

2) Նույն կոլբայի մեջ լցնել 50 սմ<sup>3</sup> ֆելինգյան հեղուկ. յիսոց մել խառնուրդը 6 բռուկ՝ հաշված յեռացման սկզբից:

3) Թողնել վորպեսզի պղինձ դիոքսիդը սուզվի կոլբայի հատակին և զուրցությամբ (ըստ հնարավորության շարժելով սուզակը) ջրահաս միուցի թույլ ծծման պահին աղբեսախ ֆիլտրի միջով թափել մնացած ամրող հեղուկը:

4)  $\text{CuO}_2$  կարմիր սուզակը յերկու անգամ թափահարել յեռման ջրի հետ և թողնել սուզակը նստի հատակին, ջուրը լցնել քամոցը՝ միուցի թույլ ծծման միջոցին:

5. Կոլբայից ֆիլտրով խողովակը հանել դատարկել կապույտ քամվածքը, լավ վողողել կոլբան և նորից միացնել ֆիլտրի հետ: Քամվածքը, լավ վողողել կոլբան և նորից միացնել ֆիլտրի հետ:

Պղինձաբիոխիդի սուզակի մեջ յեզած մահուր պղնձի բանակի վրանը ելույթը

1. Սուզակը լվանալուց անմիջապես հետո լուծել այն, 10—15 սմ<sup>3</sup> ծծմբաթթու յեռկաթի լուծույթում<sup>1)</sup>, ըստ վորուս ստացվում է  $\text{FeSO}_4$  կանաչ լուծույթը:

2) Ստացված լուծույթը զգուշությամբ դատարկել աղբեսախ նույն քամոցի միջոցով, ողիանի թույլ ծծման պայմաններում, հետեւելով, վորպեսզի քամոցի վրա ընկած պղինձ դիօքսիդն ամրողապես լուծվի:

3) Յեռացող ջրով վողողելով այն կոլբան, վարտեղ սուզակն եր և նույն ջրով լվանալ քամոցը:

4)  $\text{FeSO}_4$  լուծույթը հենց ֆիլտրատի կոլբայում քամելեռնի լուծույթով տիտրի յենթարկել, մինչև վոր վերջինու ստանա թուլ վարդգույն գունավորում:

5) Տիտրի համար գործարված քամելեռնի իորանարդ սանտիմետրների քանակով հաշվել պղնձի քանակը:

Հաշվումներ

1) Զափկած եր 20 սմ<sup>3</sup> կաթ, վորի տեսակարար կշռն եր 1,032:

2) Քամելեռնի տիտրը ըստ պղնձի համապատասխանում է 0,009 գրամ պղնձի:

1) Ծծմբաթթու յեռկաթի  $(\text{Fe}_2(\text{SO}_4)_3$  բացակայության գեղքում կարելի յե գործադրել ծծմբաթթում լուծած յեռկաթ ամոնիակի ջիր  $(\text{NH}_4)_2\text{Fe}_2(\text{SO}_4)_4$  24  $\text{H}_2\text{O}$ :

3) Պղինձ գիռքսիդի սուզակը լուծելիս ստացված  $\text{FeSO}_4$ -ի լուծիթը տիտրի յենթարկելիս գործադրված ե 15 սմ<sup>3</sup> քամելեռնի լուծութեա:

4) 15 սմ<sup>3</sup> քամելեռնին համապատասխանող մաքուր պղնձի քանակը հավասար է  $15 \times 0,009 = 0,135$  գր. կամ 135 միլիգրամ պղնձի:

5) Հստ հավելված Ն 3 աղյուսակի մենք գտնում ենք, վոր 135 մ. գրամ պղնձին համապասխանում ե 100 միլիգրամ, կամ 0,1 գրամ, կաթնաշաքար:

6) Վորպեսզի գտնենք անալիզի համար պատրաստված (500 սմ<sup>3</sup>) լուծութի մղջ գտնվող կաթնաշաքարի քանակը բազմապատկում ենք՝ 0,1 գրամ շաքարը (անալիզի համար վերցրված եր 50 սմ<sup>3</sup> կաթնասիրնեկ) 10-ով, ստանում ենք 1 գր. շաքար:

7) 100 սմ<sup>3</sup> կաթի մղջ պարունակվող շաքարը գտնելու համար (անալիզի համար վերցրված եր 20 սմ<sup>3</sup> կաթ) բազմապատկում ենք՝ 1 գրամ շաքարը  $\times 5 = 5$  գր. շաքար:

8) 100 սմ<sup>3</sup> կաթը կշռում ե 103,2 գրամ, կաթի մղջ պարունակող շաքարի տոկոսը հաշվելու համար բաժանում ենք՝

$$5 : 1,032 = 4,85\%$$

## ԶՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՎՈՐՈՇԵԼԻ

Կաթի մղջ պարունակվող չոր նյութերի քանակը կարելի յե վորոշել՝ կամ կաթի կշռամասի ջուրը անմիապես դուրսիացնելով և հաշվելով կշռի կորուստը, կամ հաշվելով առանձին ֆորմուլաներով:

Չոր նյութերի հաշվելը խոչը նշանակութեան ունի կաթի վորակը և նրա կեղծման աստիճանը վորոշելիս:

Կոռային յեղանակը

Գործիքներ՝

1. Տափակ ճենապակյա թաս, շիկացրած կվարցյա ավազով (30 գրամ).

2. Չորացման պահարան:

3. Հղկված խցանով փոքրիկ բաժակ:

Վորոշման ընթացքը՝

1) Մաքուր կվարցե ավազով ճենապակյա թասը շիկացնել և եքամատորի մղջ պաղեցնել:

2) Թասը կվարցե ավազի և ապակյա ձողի հետ մեկտեղ կշռել (կամ «ա»):

3) Հղկված խցանով բաժակի մեջ կշռել փոքրիկ ծավալով կաթը:

4) Ճենապակյա թասի մեջ լցնել բաժակից մոտավորապես 10 սմ<sup>3</sup> կաթ:

5) Կաթի մնացորդով բաժակը կրկին անգամ կշռել և կշռոների տարբերությամբ գտնել հախճապակյա թասի մեջ վերցրած կաթի կշռամասը (կ. կ. «օ»):

6) Թասը տեղավորել չորացման պահարանի մեջ 100 ջերմաստիճանում, մերթընդերթ զգուշությամբ խառնելով թասի պարունակությունը:

7) Չորացնել ճենապակյա թասը մինչև կայուն կշռումը (կ. կ. «օ») և կշռումերի տարբերությամբ գտնել կաթի չոր մնացորդների կշռը («—»):

8) Չոր նյութերի պարունակությունը վերցրած կշռամասի հանդեպ արտահայտել տոկոսներով՝

$$\text{Չոր նյութերի տոկոսը} = \frac{(c-a)}{b} \cdot 100.$$

Զար նյութերի վորոշելի ըստ Ֆորմուլաների

Ավելի հեշտ և համեմատաբար ավելի արագ ե կատարվում չորնյութերի հաշվումը ֆորմուլայով, վորի համար անհրաժեշտ ե իմանալ կաթի մղջ պարունակվող յուղային մասի տոկոսը և կաթի տեսակաբար կշռը (տ):

$$\text{Չոր նյութերի տոկոսը} = 1,2 + 2,665 \frac{100m - 100}{m}$$

Ֆլելլամանի ֆորմուլը բաղկացած ե լերկու գումարելիներից՝

$$1 \text{ ին գումարելի } 1,2 +$$

$$2 \cdot p \cdot \rightarrow 2,665 \frac{100m - 100}{m}$$

Հաշվումների ժամանակ ոգտվում ենք աղյուսակներից (տես հաշվելումները), սորոնցով իսկույն զանում ենք ճենապատվող կաթի ստացված յուղի տոկոսին և արենմետրի աստիճանին համապատասխանող 1-ին և 2-րդ գումարելիները:

Որինակ. յուղի տոկոսն ե 3,7 արենմետրի աստիճանը 31,2

Ա աղյուսակով գտնում ենք 3,7<sup>0</sup> յուղ և նրա կողքին պատրաստ 1,2  $\times$  3,7 = 4,440 արտադրյալը:

$$\text{Յաղուսակով ունենք } 31,2 \text{ արեսմետի աստիճանը և կողքին} \\ \left( 2,665 \frac{103,12 - 100}{1,0321} \right) = 8,001 \text{ արտադրյալը:}$$

Գումարելով գտած գումարելիները, կստանանք կաթի մեջ պառնակվող չոր նյութերի տոկոսը, վոր հավասար է  $8,063 + 4,44 = 12,503$ .

Գոյություն ունեն մի շարք պարզ ֆորմուլաներ՝ առանց աղյուսակների ոգնության արագ կերպով չոր նյութերը հաշվելու համար: Հիշատակինք նրանցից մեկը, վոր ընդունված է միացյալ նահանգներում և միուսը —պրոֆ. Ավ. Քալանթարինը:

$$\text{I Ֆարրինգտոնի ֆորմուլան չոր նյութերի տոկոսը} = \frac{4,8 + \omega}{4}$$

$$\text{II Քալանթարի ֆորմուլը, չոր նյութերի տոկոսը} = \frac{5 + \omega}{4}$$

### ՈՐԻՆԱԿՆԵՐ

$$1) \text{Ցուղի տոկոսը } I = 3,7 \text{ և, արեսմետի նշան } \omega = 31,2 \\ \text{Ցուղի տոկոսը } I = 4,2 \text{ արեսմետի նշան } \omega = 30,5$$

### I Դեպքի համար

$$\text{Չոր նյութերի պարունակությունն ըստ Ֆարինգտոնի} = \frac{3,7 \times 4,8 + 31,2}{4} = 12,24\%$$

$$\text{Չոր նյութերի պարունակությունն ըստ Քալանթարի} = \frac{3,7 \times 5,0 + 31,2}{4} = 12,42\%$$

$$\text{Չոր նյութերի պարունակությունն ըստ Ֆլեյշմանի=աղուսակներով} = 12,50\%$$

### II Դեպքի համար

$12,67^0_0$

$12,88^0_0$

$12,93^0_0$

Առաջին որինակում Ֆլեյշմանի վորոշումից Ֆարինգտոնի վորոշումը խոտուվում է  $0,26$  տոկոս, Քալանթարինը  $+0,08$  տոկոս:

Կարի յաւղագուրկի չոր մնացորդի վորոշելը

Կաթի յուղագուրկի չոր մնացորդը գտնում են կաթի չոր մնացորդի գտած մեծությունից հանելով յուղի տոկոսը: Իմանալով կաթի յուղի տոկոսը և արեսմետի աստիճանը, կարելի լի հերցի ֆորմուլալով հաշվել կաթի յուղագուրկի չոր մնացորդի տոկոսը:

$$\text{Կաթի յուղագուրկի չոր մնացորդի տոկոսը} = \frac{J}{5} + \frac{\omega}{4} + 0,26^*$$

Վորտեղ յ-ն կաթի յուղի տոկոսն է,  
իսկ ա-ն արեսմետի աստիճանն է:

$$\text{Հստ պրոփ. Քալանթարի ֆորմուլի չոր մնացորդը} = \frac{I + \omega}{4}$$

### ՄՈԽՐԻ ՎՈՐՈՇԵԼԸ

#### ՎԱՐԿԵՄԱՅ ԱԲՐԱՋՔԸ

1) Շիկացրած և կշռած տիգելի մեջ վերցնել մոտավորապես 25 գրամ կաթի կշռամաս:

2) Զրի բաղանիքում գոլորշիացնել սինչև չորանալը և չոր մնացորդն զգուշությամբ ածխացնել ալրոցի թույլ բոցի վրա:

3) Թողնելով տիգելը սառչի, տիգելի պարունակությունը ջրեփոքրիկ բաժիններով լվանալ, քամելով հեղուկը, վորոշ քանակությամբ մոխիր պարունակող ֆիլտրով:

4) Ցիլինդր տեղափոխել տիգելի մեջ և ջրում չլուծված ածխացած մնացորդի հետ միասին ածխողջը շիկացնել մինչև լիովին մոխրանալը (մոխրա-սպիտակ գույն):

5) Լվանալու ժամանակ ստացած ֆիլտրատը լցնել տիգելի մեջ, զգուշությամբ զոլորշիացնել և թույլ կերպով շիկացնել:

6) Կշռել տիգելը և հաշվի առնելով ֆիլտրի մեջ լեղած մոխրեցինը, հաշվել կաթում յեղած մոխրի կշռը:

Կարի ֆալսիֆիկացիայի միքանի յեղանակների յեկ կոնսերվացնող նյութերի ներկայության հայտնաբերելը

Կեղծելու նպատակով յերբեմն կաթից քաշում են սերը, կաթը նոսրացնում են ջրով կամ քաշած կաթով, իսկ յերբեմն ել միաժամանակ թե ջրով և թե քաշով կաթով:

Նշված կեղծիքների (Փալսիֆիկացիաների) վորոշումը կայտնում է նրանում, վոր տեսակաբար կշռով և լուղի պարունակությամբ վորոշում են կեղծիքի բնույթը, իսկ Փալսիֆիկացիայի աստիճանը հաշվում են առանձին գործուլաներով:

Հետազոտվող կաթի Փալսիֆիկացիայի աստիճանը հաշվելը հեշտ կատարել այն դեպքում, յերբ հնարավոր են նորմալ կաթի տեսակաբար կշռը կշռը և յուղի տոկոսն իմանալ վերջինս ամենից լավ կարելի յերաց կաթի յուղի տոկոսն իմանալ վերջինս ամենից լավ կարելի յերաց ստանալ այսպես կոչմի նմուշի անալիզից, այսինքն կաթի այնպիսի նմուշ, վորը վերցրված ե անմիջապես գործում:

Նույն կովերից, վորոնցից վերցրված եր նմուշը և կիթինույն ժամանակվա<sup>1)</sup> բաղադրությունները համեմատելով (հետազոտման ժամանակածելիի ճանաչված կաթը) վստահելի ցուցմունքներ կտանը փչացածության կամ կեղծիքի բացակայության մասին:

Յեթե տեխնիկական պայմաններով անհարմար եւ «գումի նմուշ» շրջանի և տարգա ժամանակամիջոցի համար կարելի յե ոգտվել տվյալ բաղադրությունից: Այս դեպքում հաշվումների արդյունքներն ի հարկ մոտավորապես կլինեն: Նուրացման աստիճանի մասին դատում են չետևալ ֆորմուլաներով,

Զրով նուրացրած կարի նուրացման ասիմմեր վորուելու  
ֆորմուլաներ

Հերցի ֆորմուլ՝ ավելացրած ջրի տոկոսը  $\frac{r-r^1}{r} \times 100$ ,  
վորտեղ  $r$ —նորմալ կաթի յուղազուրկ չոր մնացորդն ե,  $r^1$ —հետազոտվող կաթի յուղազուրկ չոր մնացորդն ե:

Ամբյուլի ֆորմուլ՝ ավելացրած ջրի տոկոսը  $\frac{d-d^1}{d} \times 100$ ,  
վորտեղ  $d$ —նորմալ կաթի արենմետրի աստիճանն ե,  $d^1$ —հետազոտվող կաթի արենմետրի աստիճանը:

Սեր հաելու կամ անարա եարը հաշած կարով նուրացնելու  
ասիմմեր վարուելու ֆորմուլ

Յերեսը քաշելու կամ հեռացված յուղի աստիճանը  $\frac{i-i^1}{i} \times 100$ ,  
վորտեղ  $i$ —նորմալ կաթի յուղի տոկոսն ե,  $i^1$  հետազոտվող կաթի յուղի տոկոսն ե:

Կրկնակի ֆալսիֆիկացիայի (յուղը հանած յեվ ջրով նուրացրած)  
հաշվելու ֆորմուլը

Բոմինդերի ֆորմուլը. ավելացրած ջրի տոկոսը (կաթի 100 կշռամասին)  $\frac{r}{r_1} \times v^2 - v^1$ . վորտեղ  $v^1$ —նորմալ կաթի մեջ պարունակվող ատկոսն ե,  $v^2$  հետազոտվող կաթի մեջ պարունակվող թաշված. յուղի տոկոսը (կաթի 100 կշռամասի հանդեպ)  $= 100 \left( 1 - \frac{v^1 - r}{r^1} \right)$ :

<sup>1)</sup> Թրինակ, յեթե կասկածելի նմուշը առավոտյան կեթից ե, ապա «գումի» նմուշը նույնպես պետք ե առավոտյան կեթից վերցնել:

Յերբ կաթի տեսակարար կշիռը և յուղի պարունակությունը ցուց են տալիս, վոր ջուր ե ավելացրած, ապա այդ կարելի յե հաստատել քիմիական միջանի բևակցիաներով՝ հայտաբերելով կաթի մեջ ազոտաթթու աղեր (նիտրատներ), վորոնք հաճախ ջրի հետ միասին կաթի մեջ են անցնում:

Նիտրատները հայտաբերելու համար (նիտրատալին նմառ) գործադրվում ե Սոքալետի բևակցիան:

Ինակտիվներ՝

1. Կալցիում քլորի 20 տոկոսանոց լուծույթ:
2. Ուժեղ 1,82—1,83 տեսակարար կոռով ծծմբաթթվով պատրաստված դիֆենիլամինի 2 տոկ.լուծույթ:
3. Քիմիապես մաքուր կոնցենտրիկ ծծմբաթթու:

Հետազոտման ընթացք՝

1) Փորձանոթի մեջ լցնել 20 սմ<sup>3</sup> կաթ, ավելացնել մոտավորապես 0,3—0,5 սմ<sup>3</sup> կալցիում քլորի 20 տոկ. լուծույթ և տաքացնել մինչև յեռալը: Բամել:

2) 2—3 սմ<sup>3</sup> ֆիլտրատին կաթիներով ավելացնել դիֆենիլ ամինի 2 տոկ. լուծույթ, մինչև կաթնասպիտակագույն պղտորության լեռաւլը:

3) Յերկորդ փորձանոթի մեջ լցնել 2 սմ<sup>3</sup> կոնցենտրիկ ծծմբաթթու:

4) Թթվի վրա զբուշությամբ, փորձանոթի պատերով, ավելացնել հավասար ծավալով դիֆենիլամինի պղտոր ֆիլտրատից:

Յեթե կաթը պարունակում ե ազոտաթթվի կամ ազոտական թթվի աղեր, ապա յերկու հեղուկների շփման տեղում յերկում ե կապույտ ողակ:

Ինակցիայի համար անհրաժեշտ ե քիմագես մաքուր ծծմբաթթու, վորը պետք ե նախորդ ստուգել անարատ նատուրալ կաթով, վերը նշված յեղանակով, պարզելու համար, թե արդյո՞ք ծծմբաթթուն վարունակում էր մեջ ազոտաթթու:

Կանսերվացնող նյուրերի ներկայաւրյունը հայտաբերելը

Սոգայի ներկայաւրյունը՝

Ինակտիվներ՝

1. Ռոզուլաթթվի 1 տոկ. լուծույթ:
2. 96° ալկոհոլ:

## Հետազոտման ընթացքը

1) 5 սմ<sup>3</sup> կաթին ավելացնել 5 սմ<sup>3</sup> ալկոհոլ և միքանի կաթի ռողութթվի 1 տոկ. լուծութ:

Խառնուրդների գույնը

1. Մաքուր կաթ—գորշ դեղին գունավորում:
2. Սուրա պարունակող կաթ—վարդակարմիր գույն:

Բորբը յիշ բաւրայի ներկայության դեպքում  
Ինակիսիվներ՝

- 1) Ուժեղ աղաթթու:
- 2) Կուրչումքոն թուղթ:

Հետազոտման ընթացքը՝

- 1) 10 սմ<sup>3</sup> կաթին ավելացնել 5 կաթի աղաթթու:
- 2) Խառնուրդը քամել և ֆիլտրատով թրջել կուրկում թուղթը:
- 3) Ժամացույցի աղակու վրա չորացնել թրջած կուրկում թուղթը:

Եթե հետազոտվող կաթը պարունակում է բորաթթու, ապա թուղթը գունավորվում է՝

- 1) Չորացնելիս կարմիր գույնով,
- 2) Չորացրած թուղթը ամոնյակով կամ սողալի լուծույթով թրջելիս — կապույտ սև գույնով:

Խորմալինի ներկայաւրյան դեպքում

Ինակիսիվներ՝

- 1) Շճմբաթթվի և ազոտաթթվի խառնուրդ (100 սմ<sup>3</sup> 1,80 մմ սակառար կշռով ծճմբաթթվին 1 կաթի աղոտաթթու):

Հետազոտման ընթացքը

Թիգելի բեակցիան. (1 բեակտիվ) փորձանոթի մեջ 2 սմ<sup>3</sup> ծճմբաթթվին զգուշությամբ փորձանոթի պատերով լցնել 5 սմ<sup>3</sup> հետազոտ կաթից (այնպես, վոր հեղուկները չխառնվեն):

Յեթե կաթը մաքուր է, կաթի և բժմբաթթվի շփման տեղում բաց դիղնագույն ողակ և առաջանում:

Յեթե կաթը փորմալին և պարունակում—կապտամանուշակագույն ողակ և առաջանում:

ԿԱԹԻ ԲԱԿՏԵՐՈՂՈԳԻԱԿԱՆ ՅԵՎ ԲԻՌԻՄԻՄԻԱԿԱՆ  
ՀԵՏԱԶՈՒՔՈՒԹՅՈՒՆԸ

Կաթի բակտերոլոգիական հետազոտման խնդիրներն են՝ բակտերիաների քանակի հաշվառումը և կաթի միկրոֆլորայի բնույթի պարզաբանումը. Առաջին խնդիրը լուծելու համար կան մի շարք համեմատաբար պարզ լեզանակներ, վորոնք միանգամայն, պիտանի լեն մասսայական բակտերիոլոգիական կոնտրոլի պրակտիկ նպատակների համար. յերկրորդ խնդիրը պրակտիկ պայմաններում կարող է միայն մասամբ լուծվել կաթի վորոշ պակասություններ առաջացնող պատռութեն միկրոբների ներկայությունը հայտնաբերելը հնարավոր և միայն յերկար ժամանակ պահանջող բակտերորուլոգիական անալիզի բարդ մեթոդներով, հատուկ բակտերիոլոգիական լաբորատորիաներում:

Այստեղ նշված են կաթի բակտերիոլոգիական կոնտրոլի ավելի մատչելի միջոցները:

ԿԱՐԻ ՄԻԿՐՈՖԼՈՐԱՆ

Բակտերիաների մի մասն ընկնում են կաթի մեջ հենց կովի ստինքից, վորտեղ ինչպես զերմանակական բակտերոլոգների աշխատանքներով հաստատված ե, գոյություն ունի ուրուցն միկրոֆլորա, վորը գլխավորապես կազմված է միկրոկոկկերից:

Միկրոկոկկերը շատ չնշին քանակով կաթնաթթու լեն առաջացնում և կաթի մեջ նկատելի գործներություն չեն հայտաբերում: Կթելու ժամանակ կովի ստինքների և մարմնի մակերեսից, կթողի ձեռքերից, ողից, կթող մեքենաներից, տամաններից և այլն, բավականաչափ բազմազան բակտերիաներ են ընկնում կաթի մեջ:

Կթելու ժամանակ կաթի մեջ ընկնող բակտերիաների թվում, կարող են լինել հետևյալները (տես աղյուսակ 8):

Բացի վերը նշված միկրոբանիդմներից կաթի մեջ կարող են յերբեմն ընկնել և պատոգեն տեսակները՝ առողերկուլոգի փալտիկ, վորովայնակների տիֆ առաջացնող, խոլերալի, դիօնտերիալի, դաքաղի, սիրիակախտի և այլ միկրոբներ:

Աշխանական Հ 8

Բակտերիաների անունները	Բակտերիաների անունները	Կաթի մեջ ինչ փոփոխու- թյուններ են առաջացնում
I Կաթնաթթու բակ- տերիաներ	1) Streptococcus lactis- սրա սէնոնիմերը՝ Bact. lactis acidi Leichmann և Bact. lacf. acidi Gün- theri	Կաթի թթվելու գլուպոր- դերն ե խաղում։ Կաթի մեջ առաջացնում դ մինչև 1200 թթվություն ըստ Թեորների, խմբելով կաթնաջաքարի մոտ 10% Կաթի մեջ լորձային թանձրություն ե առա- ջացնում։ Խոզը դեր ե խաղում շփե- ցարական պանրի հասու- նացման գործում։ Բուլղարական մածունից առանձնացրել ե Մհչնիկովը Կաթի մեջ առաջացնում ե մինչև 300% թթվություն ըստ Թեորների, խմբելով կաթնաջաքարի մոտ 30% Թույլ թթվուներ առաջաց- նողներ։ Կաթնաջաքարը խմբելիս մեծ քանակու- թյամբ գազեր են առա- ջացնում (ջրածին, CO <sub>2</sub> )։ Կաթի մեջ հեղտությամբ ճնշվում են կաթնաթթու բակտերիաների կողմից։ Եսկան դեր են խաղում պանրիների հասունացման ժամանակ (առաջացնելով ածխաթթու զաղ) նպաս- տում են «աչքերի» առա- ջացմանը և տալիս են պահ- ընելուցիցիկ սուր հոտ։ Առաջացնում են կաթի սպիտակուցների քայլա- յում, ունեխցնող բակտե- րիաներից մի քանիսը ա- ռաջացնում են ձարպերի ճեղքում (ա), առաջացնում են պիգմենտներ (բ), ա- ռաջացնում են գազեր (բ.ե.)։
a) սորեստոկոկի	2) Streptococcus hollan- dicus.	
6) Փայտիկանման բակտերիաներ	1) Bact. casei և X	
	2) Bact. bulgaricum	
II Coli-Aerogenes խմբի բակտերիաներ	1) Bact; coli commune. 2) Bact. lactis aerogenes	
III Պրոպիոնաթթու խմո- րում առաջացնող բակտե- րիաներ	Bact. acidi propionici	
IV Սպիտակուցների քայ- լայում առաջացնող բակ- տերիաներ	Bact. fluorescens lique- faciens	
Անորո	Bacil. subtilis. Bacil. mesentericus	

Բակտերիաների անունները	Բակտերիաների անունները	Կաթի մեջ ինչ փոփոխու- թյունները
Անաերոբ—զ) Շարժուն սպորային փայտիկներ	Bac. putreficus	Խնամելու ընթացքում կա- թի կարմիր գույնավորում են առաջացնում։
Վ. Կաթի գունավորում առաջացնող բատկե- րիաներ	Bact. prodigiosum	Առաջացնում են կաթի կապույտ գունավորում։
	Bact; cyanogenes	Առաջացնում են կաթի գեղին գունավորում։
	Bact. Synxanthum	Առաջացնում են գոմի, խոտի հոտ
VI Անորմալ համ և հոտ առաջացնող բակտերիաներ	Coli խմբի մի քանի բակտերիաներ	Սալոնի համ են առլիս Տալիս են դառը համ։
	Bact. lactis Saponacei	
	Coli խմբի Bact. innocu- um բակտերիաներ	
VII Կաթի անորմալ կոսմիսանցիա (խառ- թյուն) առաջ բերող բակ- տերիաներ	Micrococcus Freudenre- ichi	Առաջացնում են կաթի լորձայնություն։
	Streptococcus hollandicus	Առաջացնում են կաթի լորձայնություն։
	Բուլղարական փայտիկի լորձային ցող	Առաջացնում են կաթի լորձայնություն։
VIII Խմորիչներ և բոր- բսներ	Torula amara Penicillium brevicaule	Առաջացնում են գառը շշաղգամի։ համ։
	Oidium laevis	Թթված կաթի սերուցքի երեսին առաջացնում են սպիտակ բորբսն։

Բակտերիոլոգիական կոնսրովի համար կարի նմաւր վերցնելը

Բակտերիոլոգիական հետազոտման համար կաթի նմուշ վերցնե-  
լիս պետք ե հետեւալ պայմանները պահպանել։  
1. Կաթը պետք ե լավ խառնել թափահարելով կամ խառնիչով  
կաթ տեղափոխելու անոթների մեջ։ Յեթե միքանի նմուշներ են, ապա  
ամեն մի նմուշից հետո խառնիչը (շերեփը) լվանալ յեռացող ջրով։  
2. Շիշը, պիպետը, ապակիս խողովակները, կառչուկե խցան-  
ները, —մի խոսքով ամեն ինչ, զոր գործադրվում ե կաթի նմուշները  
վերցնելու և պահպանելու համար, ստերիլիզացիայի յեն լենթարկվում  
160° C. ազբեստի տակ պահպանում մեկ ժամ տևողությամբ։  
3. Կաթի նմուշը 25 սմ<sup>3</sup> քանակով հարմար ե վերցնել ապակիս  
փայտիկներ, ստերիլիզացիայի լենթարկված խողովակով (9—11 մմ տրա-  
յերկար, ստերիլիզացիայի լենթարկված խողովակով)։ Խողովակն ընկղումում են բիոռնի մեջ մինչև հատակը. լեռ-  
մագծով։

խողովակը լցվում է կաթով, նրա վերին ծալրը փակում են մատով, Խողովակը դուրս են հանում և նմուշն անմիջապես դատարկում ապակյա հզկված խցանով, ախտահանված շնչ մեջ (ավելի լավ են հերմետիկ փականով). ծալրահեղ դեպքում կարելի լի ոգտագործել շնչ հետ միասին պաստերիզացված սոլորական խցաններով:

4. Նուշը վերցնելիս նշանակում են կաթի ջերմաստիճանը:

5. Յեթե անհնարին է կաթի նմուշներն անմիջապես հետազոտելու ապա նրանց պիտք է իսկույն սառեցնել մինչև 0° և պահել սառուցիչում:

Բակտերիաների գաղութների նաևվելլը Պետրի բասերում (պնակ)

Մեթոդի եյությունը կայանում է նրանում, վոր կաթի վորոշ քանակ ստերիլ ջրով մինչև վորոշ (խոշոր) աստիճան նոսրացնելուց հետո Պետրի-ի թասերի մեջ խառնում են սննդարար միջավալրի հետ, թասերը խառնուրդի հետ դնում են տերմոստատի մեջ, վորտեղ վորոշ ջերմաստիճանում պահում են: Տերմոստատում գտնված ժամանակ ամեն մի բակտերիֆական բջիջից զարգացած զաղութները հետագայում հաշվում են լուսայի (խոշորացուց, վուպնյակ), միջոցով: Հաշված զաղութների քանակը բազմապատկում են կաթի նոսրաքան աստիճանով և գտնում են բակտերիաների քանակը 1 սմ<sup>3</sup> կաթի մեջ:

#### Գործիքներ

1. 8—10 անգամ խոշորացնող լուսպա.
2. Պետրի թասեր (նայած նմուշների քանակին).
3. Պիպետներ » » » ).
4. Փորձանոթներ » » » ).
5. Վոլ'ֆհուգելի հաշվելու քանոն:

#### Բետկիվներ

1. Ստերիլ ջուրը ստերիլացնում են 2 ատմոսֆերա ճնշման տակ—20 րոպե տեղությամբ. հետո ստերիլ պիպետով 2 սմ<sup>3</sup> և 99 սմ<sup>3</sup> ածում են ստերիլ ամանների մեջ:

2. Սննդարար միջավալրեր:

Պետրի թասերում գաղութներ աճեցնելու համար անհրաժեշտ են սննդարար միջավալրեր: Նայած հետազոտման խնդիրներին, համապատասխան փոխվում են նաև սննդարար միջավալրերի կազմը: Պետրի թասերում գաղութները հաշվելու համար կարելի լի ոգտվել

1) Մսապեպտոնային ագարով (բակտերիաների ընդհանուր քանակը հաշվելու համար):  
2) Մսապեպտոնային ժելատինով (բակտերիաների ընդհանուր քա-

նակը հաշվելու և բակտերիաների այն խմբերի համար, վորոնք ժելատինը նոսրացնում են):

3) Սիճուկային ագարով կավճի հետ (կաթնաթթու բակտերիաները հաշվելու համար) (յերես 58):

Պետրի բասերը լցնելու նախապատրաստը:

#### Հետազոտման ընթացքը

1) Յերեք ստերիլ բանկաներում ստերիլ ջրով նոսրացնել կաթի նմուշը՝ լավ խառնելով: Նոսրացումները՝ նայած կաթի կեղտոտությանը, կատարվում են 1:100-ից մինչև 1:100000 հետևյալ ձևով:  
1-ին նոսրացում 1:10—ստերիլ պիպետով վերցնել 1սմ<sup>3</sup> կաթ և ածել 9 սմ<sup>3</sup> ստերիլ ջրի վրա:

2-րդ նոսրացում 1:100—1 սմ<sup>3</sup> կաթ ածել 99 սմ<sup>3</sup> ստերիլ ջրի վրա:

3-րդ նոսրացում 1:1000—առաջին նոսրացումից վերցնել 1 սմ<sup>3</sup>, վորը պարունակում ե 0,1 սմ<sup>3</sup> հետազոտվող կաթից և ավելացնել 99 սմ<sup>3</sup> ստերիլ ջրի վրա:

4-րդ նոսրացում 1:10,000—Յերերերդ նոսրացումից վերցնել 1 սմ<sup>3</sup> վորը պարունակում ե 0,01 սմ<sup>3</sup> հետազոտվող կաթից և ածել 99 սմ<sup>3</sup> ջրի վրա:

5-րդ նոսրացում 1:100,000—Յերերերդ նոսրացումից չափել 1 սմ<sup>3</sup> վորը պարունակում ե 0,001 սմ<sup>3</sup> հետազոտվող կաթից և լցնել 99 սմ<sup>3</sup> ջրի վրա:

2) Վորոշ նոսրացման յենթաբկված կաթի ամեն մի անոթից (որինակ՝ ա) 1:100, բ) 1:1000, ց) 1:10,000) ստերիլ պիպետով չափել 1 սմ<sup>3</sup> և ածել Պետրի թասերի մեջ, պիպետի ծայրը հասցնելով թասի հատակին:

3) Պետրի թասի մեջ ածել սննդարար խառնուրդից 10 սմ<sup>3</sup> հաշված զրությամբ, արագ կերպով թասը պատել սեղանի վրա շրջագծելած զրությամբ, արագ կերպով թասը պատել սեղանի վրա համարով շարժելով թասը, թասը դնել հորիզոնական սեղանի վրա համարավասար սառչելու համար: Սովորաբար ագարը լցնում են 45°C, ժետավասար դուրս համար:

4) Թասերը դնելով տերմոստատի մեջ, պահպանելով 37°C (յեթե միջավայրը ագարից ե, բացի այդ՝ ագարով թասերը պետք է դնել կափարիչով դիպի ցած): Մսապեպտոնային ժելատինի դեպքում կափարիչով դիպի ցած): Մսապեպտոնային ժելատինի պետք ելիսի 20—22°C:

5) 1—2 որ անց լուսայի և Վոլ'ֆհուգելի թիթեղի (կամ թափակ տակ դրված միւսնետը ագարից թիթեղի ոգնությամբ), հաշվել բակտերի տակ դրված միւսնետը ագարից թիթեղի ոգնությամբ), հաշվել բակտե-

բիաների գաղութների քանակը (ժելատինը նոսրացնող բակտերիաների հաշվառման դեպքում թասերը տերմոստատում թողնում են 2—3 որ):

6) Գաղութների թիվը բազմապատկելով նոսրացման աստիճանով, վորոշում են 1 սմ<sup>3</sup> կաթի մեջ պարունակվող բակտերիաների քանակը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. 1 սմ<sup>3</sup> կաթի մեջ պարունակվող բակտերիաների քանակն ստացվում է Պետրիի բոլոր թասերում աճեցրած գաղութների հաշվման թվաբանական միջինի ձևով:

Բակտերիաները միկրոսկոպի տակ հառվելու յեղանակը

(Բ Ր Ի Դ Ե Մ Ե Թ Ո Դ Ը)

Կաթի ճիշտ չափված քանակը (0,01 սմ<sup>3</sup>) փոխադրում են առ սրբայական մաքուր ապակու վրա և քսում 1 սմ<sup>3</sup> մակերեսի վրա: Պեպարատը ֆիքսացիալի յենթարկելուց և մեթիլ-կապույտով ներկելուց հետո դիտում են և հաշվում միկրոսկոպով:

Գործիքներ՝

1) Միկրոսկոպի իմմերզիոն սիստեմով (վոսպնյակների համակարգ):  
2) 0,01<sup>3</sup> պիպետ կամ պլատինե հանգույց, վորը վերցնում է 0,01 սմ<sup>3</sup> կաթ: Հանգույցի չափը վորոշելու համար հանգույցով վերցնում են 10 կաթի կաթ և կըռում են, Յեթե կըռու հավասար է 0,1 գրամի՝ հանգույցի տրամագիծը ճիշտ և վերցված, իսկ յեթե 0,1 գրամից ավելի է կամ պակաս, համապատասխան չափով հանգույցի տրամագիծը ըստ իր սինթեզի ստուգում են և նորից ստուգում են 10 կաթի կաթ կրկին անգամ կըռելով, մինչև վոր ստացվի ճիշտ 0,1 գրամ քաշ:

3) Ասեղ.

4) Կարտոն ճիշտ չափված 1 սմ<sup>2</sup> մակերեսով.

5) Որյեկտիվը միկրոմետր 0,01 մմ բաժանումներով (սկալայով):

Բեակտիվներ

1. Քսիլու կամ եթեր.

2. 90° ալկոհոլ կամ գե-նատուրատ.

3. Մեթիլեն-կապույտի լուծույթ (ներկի հազեցրված ալկոհոլային լուծույթի 30 սմ<sup>3</sup> նոսրացնում են 0,01<sup>0</sup><sub>0</sub> KOH-ի 100 սմ<sup>3</sup> լուծույթի մեջ):

<sup>1)</sup> *Six The care & Handling of Milk.* by H. E. Rosse, 1927.

Հետազոտման ընթացքը՝

1) Սատերիլ սլիզետով կամ պլատինե հանգույցով չափել հետազոտվող կաթից ճիշտ 0,01 սմ<sup>3</sup> և փոխադրել յաքուր առարկայական ապակու վրա:

2) Սատերիլ ասեղով կաթը տարածել առարկայական ապակու 1 սմ<sup>2</sup> մակերեսի վրա, այդ մակերեսը վորոշելու համար, առարկայական ապակու տակ տեղափորել կարտոնի այն կտորը, վորի վրա նշանակված ե 1 սմ<sup>2</sup> մասերի բաժանած ցանց:

3) Չորացնել պրեպարատը, տեղավորելով նրան հարթ մակերես ունեցող և փոշուց պաշտպանված տեղ:

4) Յուղը լուծելու համար պրեպարատը մեկ բոսկե տեղավորել կուլի մեջ, բեակտիվի ավելցուկը թափել ապակու վրայից և կրկին անգամ պրեպարատը չորացնել:

5) Պրեպարատը Փալոիֆիկացիայի յենթարկել 90° ալկոհոլի կամ գե-նատուրատի մեջ (1—2 լոպե).

6) Պրեպարատը միքանի բոսկե ընկղմել մեթիլ-կապույտի մեջ:

7) Պրեպարատը գունատելու նպատակով վողողել ջրում և 1 րոպե իշեցնել ալկոհոլի մեջ (պրեպարատի փոնը պետք ե լինի բաց կապույտ):

8) Պրեպարատը չորացնել քամիչ թղթի մեջ:

Միկրոսկոպի ուղելիլ (տեսողության դաշտի մեծության գորոշելը):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Պետք ե շարժվող սեղան և իմմերզիոն սիստեմ ունեցող միկրոսկոպ գործածել: Հաշվելն արագացնելու համար վերցնել ոկուլյարի և որյեկտիվի ալինակիսի կորմինացիա, վորպեսդի տեսողության դաշտի տրամագիծը հավասար լինի որդիկա միկրոմետրի 16 գծիկների (բաժիններին):

Միկրոսկոպի սեղանի վրա տեղավորելով որևէկտ միկրոմետրը, գտնում են, թե միկրոմետրի քանի բաժանումներն են ծածում անսողության դաշտը, ավագալ ոկուլյարի և իմմերզիայի կուլը դեպքում և ապա հաշվում են տեսողության դաշտի մեծությունը:

ԶՐԻՆԱԿՆԵՐ

1) Որյեկտիվի միկրոմետրի ամեն մի մասը հավասար է 0,02 մմ:

2) Տեսողության դաշտի տրամագիծը տեղավորվում է (տեսնում ենք) միկրոմետրի 16 մասերը, այսինքն՝ շառավիղը հավասար կլինի միկրոմետրի 8 մասին կամ 0,08 մմ:

3) Շրջանի մակերեսի փորմուլայով  $\pi r^2$  կգտնենք միկրոսկոպի տեսողության դաշտի մեծությունը:

$$\text{Տեսողության դաշտը} = \pi r^2 = 3,14 \times 0,08^2 = 0,0201 \text{ մմ}^2,$$

Քանի վոր հետազոտվող կաթի մակերեսը հավասար է 1 սմ<sup>2</sup>,  
ապա միկրոսկոպի մեր տեսողության դաշտը այդ մակերեսի մեջ կտե-  
ղավորվի:

$$2 \text{ см}^2 : 0,02 \text{ см}^2 = 5000 \text{ անգամ}$$

այսինքն պրեպարատը միկրոսկոպով դիտելիս, անսանելի չեն նրա  $\frac{1}{5000}$  մասը:

5) Հետազոտման համար վերցրված եր 0,01 սմ<sup>3</sup> կաթ, հետևապես տեսողության դաշտի մեջ մենք տեսնում ենք 1 սմ<sup>3</sup> կաթի  $\frac{1}{500^2 000}$  մասը: Մեկ տեսորության դաշտում հաշված բակտերիաների քանակը բազմապատկելով 500,000, կատանանք 1 սմ<sup>3</sup> կաթի մեջ լեզած բակտերիաների քանակը: Կաթը գնահատելու համար սովորաբար հաշվում են մի-քանի (մինչև 30) տեսողությանդաշտ:

### ՍՆՆԴԱՐԱՐ ՄԻԶԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԵԼԲ

Մասպետոնային ագար<sup>1)</sup>

1000 սմ<sup>3</sup> մաքուր խմելու ջրին վերցնում են՝

Լավորակ (վոչ չափից դուրս չորացրած) ագար . . . . .	15 գրամ
Մաք եքստրակտ . . . . .	5 գրամ
Գելապոն . . . . .	10 գրամ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Յեթե ագարի մեջ կան աղեր և կելտեր, այդպիսիները թրջելով և լվանալով պիտք ե հեռացնել: Մսի եքս-  
տրակտը և պիտոնը պիտք ե լինեն այնպիսի մարկալից, վորն  
արդեն փորձված ե: Մսի եքստրակտ չլինելու դեպքում թույլա-  
տրելի է ոդավել սովորական յեղանակով պատրաստված մսա-  
ջրից: Այդ դեպքում, իհարկե, բաղադրության մեջ պիտք ե ավե-  
լացնել 0,5% հասարակ աղ:

Նշված բաղադրիչ մասերի համապատասխան վորակի և կշռա-  
մասերի ճշտության դեպքում pH սովորաբար հավասար ե լինում  
6,6: Այս թիվը պատրաստի միջավայրի մեջ պիտք ե ստուգել: Նմանապես միջավայրը յերկար պահելու դեպքում նա  
պիտք ե կրկնակի ստուգման յենթարկվի, ըստ վորում նշված  
թիվը յեթե փոխվում են 0,4-ից ավել պիտք ե ստուգվի:

1) Кардашев и Хецов «Стандартные методы исследования молока»  
թրեց:

Մասպետոնային մելատին<sup>1)</sup>

200 կշռամաս ջրին վերցնել 2 կշռամաս Liebig'յան եքստրակտ,  
2 կշռամաս Witte ի պեպտոն, 1 կշռամաս քրորնատարիում, տաքացնել հո-  
սող գոլորշու մեջ  $\frac{1}{2}$  ժամ, սառեցնել, թողնել հանգստանա, քամել:  
900 կշռամաս քամած հեղուկին ավելացնել 100 կշռամաս լավորակ  
սպիտակ ժելատին: Վերջինիս ուռչելուց հետո տաքացնել հոսող գո-  
րշու մեջ (ամենաշատը  $\frac{1}{2}$  ժամ), հետո, չսպասելով հեղուկի սառչե-  
լուն ավելացնել 30 մաս կծու նատրի նորմալ լուծույթից և հետո նույն  
լուծույթից շարունակել կաթի կաթիլ ավելացնել, մինչև վոր հարթ  
կապտամանուշակագույն լակմուսի թղթի վրա չեղոք բեակցիա ստաց-  
վի: Նորից  $\frac{1}{2}$  ժամ տաքացնել հոսող գործու մեջ, կրկնին անգամ ստու-  
գել բեակցիան և, յեթե կարիք կա, ուղղումն մտցնել ուկալիի նույն  
լուծույթով:

Ավելացնել  $\frac{1}{2}$  կշռամաս բյուբեղային չողմնահարված սողա (կամ  
սողայի նորմալ լուծույթի 10 ծավալամաս): Հոսող գոլորշու մեջ դար-  
ձալ տաքացնել  $\frac{1}{2}$  ժամ (ամենաշատը  $\frac{3}{4}$  ժամ)և քամել նուրբ քամիչ  
թղթի միջով: Ածել տասը-տասը սմ<sup>3</sup> ախտահանված փորձանոթների  
մեջ և 15—20 րազեն նրանց ստերիլիզացիայի յենթարկել հօսող գոլոր-  
շու մեջ: Իվերջո ստացված ժելատինը պիտք ե լինի թափանցիկ, դեղ-  
նագույն,  $26^{\circ}\text{C}$ -ից ցածր չպետք ե կակդի և  $30^{\circ}\text{C}$ -ից ցածր չպետք ե հե-  
տուկ (դառնա) կապտամանուշակագույն լակմուսի թուղթը տալիս ե  
զուկ դառնա) կապտամանուշակագույն իսկ ֆենոլֆտալինը պիտք ե դեռևս տա թթվա-  
պարզ կապտագույն, իսկ ֆենոլֆտալինը պիտք ե դեռևս տա թթվա-  
պարզ թույլ բեակցիա:

Սինուկալին ագար<sup>2)</sup>

Քաշած կաթը 36°C-ում պահնի մակարդվում և 30 րո-  
պերի ընթացքում ստացված թանձը նյութը կարուում են տարբեր  
պերի ընթացքում ստաքացնում են մինչև  $55^{\circ}\text{C}$ : Մինուկն ամբողջա-  
ռուղղություններով և տաքացնում են մինչև  $55^{\circ}\text{C}$ : Մինուկն ամբողջա-  
ռուղղություններով նպատակով քամում են, իսկ քաղցր սիմուկը ձվի  
պիտք ենթացնում են թափանցիկ և գործադրում են ամուր մի-  
սպիտակուցավ դարձնում են թափանցիկ և գործադրում են ամուր մի-  
սպիտակուցավ դարձնում են թափանցիկ և գործադրում են ամուր մի-  
սպիտակուցավ դարձնում են թափանցիկ և գործադրում են ամուր մի-  
սպիտակուցավ դարձնում են թափանցիկ և գործադրում են ամուր մի-  
սպիտակուցավ դարձնում են թափանցիկ և գործադրում են ամուր մի-  
սպիտակուցավ դարձնում են թափանցիկ և գործադրում են ամուր մի-  
սպիտակուցավ դարձնում են թափանցիկ և գործադրում են ամուր մի-  
սպիտակուցավ դարձնում են թափանցիկ և գործադրում են ամուր մի-  
սպիտակուցավ դարձնում են թափանցիկ և գործադրում են ամուր մի-  
սպիտակուցավ դարձնում են թափանցիկ և գործադրում են ամուր մի-  
սպիտակուցավ դարձնում են թափանցիկ և գործադրում են ամուր մի-  
սպիտակուցավ դարձնում են թափանցիկ և գործադրում են ամուր մի-  
սպիտակուցավ դարձնում են թափանցիկ և գործադրում են ամուր մի-  
սպիտակուցավ դարձնում են թափանցիկ և գործադրում են ամուր մի-  
սպիտակուցավ դարձնում են թափանցիկ և գործադրում են ամուր մի-  
սպիտակուցավ դարձնում են թափանցիկ և գործադրում են ամուր մի-  
սպիտակուցավ դարձնում են թափանցիկ և գործադրում են ամուր մի-  
սպիտակուցավ դարձնում են թափանցիկ և գործադրում են ամուր մի-  
սպիտակուցավ դարձնում են թափանցիկ և գործադրում են ամուր մի-  
սպիտակուցավ դարձնում են թափանցիկ և գործադրում են ամուր մի-


1) «Стандартные методы исследования питьевых источников вод», 1927 г  
թրեց:

2) Войткевич «Молоко Московского рынка».


Կաթի մեջ զարգացող բակտերիաներից շատերն առաջացնում են առանձին ֆերմենտ՝ բեղուկտագայ, վորոն ընդունակ և գունատել (վերականգնել) միքանի որգանական ներկեր (որ մեթիլ-կապույտ), Վորքան հին և կաթը և կեղտուված, այնքան ավելի շատ բակտերիաներ և պարաւակում և ալնքան արագ և նա ներկը գունատում. Ներկի գունատվելու արագությունից նաև կարելի է դատել կաթի թարմության և բակտերիաներով կեղտուված լինելու աստիճանի մասին:

Գործիքներ

1) Ֆունկեյի ուղղուկտագի դործիք (նկար 20): Գործիք չլինելու դեպքում հետազոտությունը հնարավոր է կատարել սովորական փորձանոթների մեջ խցաններով և ջրային բաղանիքով:



Նկ. 20



Նկ. 21

Բեակելիվներ

Մեթիլ-կապույտի հագեցրած լուծույթ (5 գրամ մեթիլկապույտը խառնում են 10—15 սմ<sup>3</sup> գինու ալկոհոլի հետ/ 2—3 ժամ անց վերցնում են 5 սմ<sup>3</sup> մեթիլ-կապույտի հագեցրած ալկոհոլային լուծույթ և խառնում են 19 սմ<sup>3</sup> դեստիլատ ջրի հետ):

Հետազոտման ընթացքը

1) Բեղուկտագային փորձանոթների մեջ լցնել 1 սմ<sup>3</sup> մեթիլ-կապույտը, 20 սմ<sup>3</sup> կաթ (կարելի է վերցնել կիսով չափ մեծությունում ունեցող փորձանոթներ):

2) Բեղուկտագային փորձանոթները փակել խցաններով (կամ ապակյա գնդերով), դնել բաղնիսի մեջ, վորը տաքացրված և լինում մինչև 37°C:

3) Դիտել փորձի գունատվելու ընթացքը և տեսղությունը:

Բակտերիաների քանակի և կաթի համեմատական մաքրության մասին մոտավոր գաղափար կազմելու համար առաջարկված է հետևյալ (№ 9) Բարտել-Յենսեն-ի աղյուսակը:

ԱՊՅՈՒՍԱԿ № 9

Գունատվելու ժամանակը	I մմ <sup>3</sup> կաթի մեջ յեղած բակտերիաների քանակը	Կաթի դասը (կարգը)
5½ ժամից վոչ չուտ	200—500 հազար	I կարգի (լավ)
2 ժամից մինչև 5½ ժամ	0,5—4 միլիոն	II կարգի (միջին)
20 րոպեից վոչ չուտ	4—20 միլիոն	III կարգի (վատ)
20 րոպեից չուտ	20 միլիոնց ավել	IV կարգի (շատ վատ)

Արտասահմանում բեղուկտագային փորձը լայն գործադրություն և գտել է նրա ցուցմունքները նկատի յին առնվում շուկայում կաթը գնահատելու ժամանակականությունը:

Խմորման փորձը

Ախտահանված փորձանոթների մեջ լցրած կաթը տեղավորում են 38—40°C ջրի բաղանիքի մեջ: 12 և 24 ժամ անց, դիտում են կաթի մեջ պարունակված փոփոխությունների բնույթը: Կաթը նորմալ է, յեթե 12 ժամ անց հեղուկ է, կամ թե գեռ սկսում է մակարդկվել 24 ժամ անց, ժամացվում է լավ, ամուր, թանձը մածնանյութ՝ մաքուր հոտով և գուրեկան համուլ:

Կաթը կեղալու ե, վատորակ, յեթե 12 ժամ անց թանձը նյութի մեջ լինում են բշտիկներ և շատ սինուկ ե անջատվել: Այն կաթը, վորմեջ լինում են բշտիկներ և շատ կծկություն կամ ալիք խմորն առաջացրած գաղերից ըլլ տալիս ե ծակծկություն կամ ալիքավագան կամ ալիքավագանին գաղ առաջացնող ձողաձկ բակտերիաներ:

Գործիքներ

1) Վալ'տեր Հերբերի կաթը խմորելու գործիք (նկար 21): (Յեթե անհնարին և Հերբերի գործիքը ձեռք բերել, կարելի է նետազոտումը կատարել սովորական փորձանոթներում, հատուկ ջրաբաղանիսի միջոցով):

1) Փորձանոթները ստերիլիզացնում են այսպես նրանց ծածկում են իրենց ծածկույթներով տեղավորում չորացնելու պահարանի մեջ և տաքացնում 160°C ջերմությամբ մինչև 30 րոպե տեսղությամբ:

## Հետազոտման ընթացքը

- 1) Մաքուր ստերիլ փորձանոթների մեջ, մոտ մինչև պոռունկը լցնել կաթ:
- 2) Փորձանոթները փակել առանձին կափարիչներով (տես նկար 22 և 23) կամ բամբակով և  $39^{\circ}$ — $40^{\circ}\text{C}$  ջերմություն ունեցող ջրաբաղանիքի մեջ դնել:
- 3) 12 և 24 ժամ անց, դիտել թանձրության բնույթը:

## Աշխոյակ Հ 10

Պետքի յեկ Վիստանի նմուշների գնահատումն ըստ խմորման


(Ամերիկան բակտերիոլոգների ասոցիացիայի պաշտոնական մեթոդներով)

Տիպ A—նմուշը հեղուկ է, մակարդումը դեռ չի սկսվել:

A<sub>1</sub>—կաթը միանգամայն հեղուկ է և ունի քաղցր կամ զուտ թթու համ:

A<sub>2</sub>—սերուցքի շերտի տակ նկատվում է մի փոքր սիճուկ, իսկ մակարդում դեռևս չի յերևում:

A<sub>3</sub>—մակարդման սկիզբը:



Նկ. 22

Այս տիպին նմանվող կաթը պետք է համարել միանգամայն լավորակ, բակտերիալ տեսակետից մաքուր (նկար 22):

Տիպ B—նմուշը ժելատինանման է, հալասարաչափ թանձրացած, վորը նման է դոնդողի: Նկատելի չափով սիճուկ չի արտադրվել:

B<sub>1</sub>—թանձրությունը նման է դոնդողի, սիճուկ բոլորովին չի առաջացել:

B<sub>2</sub>—թանձրության մեջ նկատվում են միքանի ճեղքեր և դատարկ բշտիկներ, վորոնք լցված են սիճուկով:

B<sub>3</sub>—շերտեր, սիճուկով լիքը ճեղքվածքներ, ճեղքվածքներ թանձր նյութերի մեջ, չնչին քանակով սիճուկի անջատում:

Կաթը միանգամայն լավորակ է, ունի կաթնաթթվային միկրոբներ:


Տիպ C—նմուշը պանրանման է, թանձր նյութը շատ թե քիչ սեղմված է և փոխանցվել է պանրի, անջատված սիճուկը կանաչավուն գույն ունի և քիչ թթու լի:

C<sub>1</sub>—թանձր նյութը նոր և սկսվել պանրանմալ, սիճուկ քիչ և անջատվել:

C<sub>2</sub>—պանիրը սեղմվել է մատիտի ձևով, կանաչագույն քիչ թթու սիճուկ:

C<sub>3</sub>—պանրանիտը չափազանց սեղմված է, մասամբ թելանման, սիճուկն ավելի սպիտակագույն է:

Նմուշը ցույց է տալիս, վոր կաթի մեջ մակարդային ֆերմենտարադրող միկրոբներ կան: Այդ տեսակին են պատկանում գլխավո-



Նկ. 23

բաղես Գորինիի կուրծի կոկկերը:

Բացի պանրագործարանից, բոլոր աշտաղը ությունների համար արդարիսի կաթը հում վիճակում ցանկալի չե:

Տիպ D—(նկար 23) թանձր նյութը սուզվել է հատիկների թեփուկների և փաթիլների ձևով, անջատված սիճուկը սպիտակագույն, դեղնագույն է, կամ ունի վորեւ ուրիշ վատ գույն:

D<sub>1</sub>—թանձր նյութը մանր հատիկավոր է կամ մասամբ համաշափ:

D<sup>2</sup>—թանձր նյութը խոշոր հատիկների ձևով ե, սիճուկի անջատվելը նկատելի յեւ:

D<sub>3</sub>—թանձր նյութը բաղկացած ե խոշոր փաթիլներից, նաև պատըոված ե սպիտակագույն կամ վորեւ ուրիշ վատ գույնի սիճուկով:

Կաթն արտադրության համար անպետք ե: Կաթի այդպիսի տեսակը գլխավորապես պայմանավորված ե նրանով վոր կաթի մեջ պարունակվում են նեխուժն առաջացնող միկրոբների տեսակներ, վորոնց մեծ մասը պատկանում են սպոր առաջացնողների խմբին, հետեւապես նրանցից չի կարելի աղատվել նաև պաստերիզացման միջոցով:

Տիպ E—Նյուշը «յեռում ե»: Նկատվում ե գաղերի մեծ կամ փոքր չափերով առաջանալը:

E<sub>1</sub>—սերուցքի շերտումն են կամ թանձր նյութի մեջ, գաղերի պղպջակներ կան:

E<sub>2</sub>—թանձր նյութը և սերուցքն ամբողջապես լցված են գաղերի պղպջակներով:

E<sub>3</sub>—թանձր նյութն ամբողջապես փրփրած ե սպունդի պես:

Ան մակարդված կաթն և այսպիսի տեսք ունենում, վորը մեծ քանակությամբ կաթի խմորիչներ և պարօւնակում կամ յուղաթթվի միկրոբներով ե կեղտոտված, իսկ յերեմն ել «Coli-Aerogenes» տիպի աղիքալին ցուպիկներ:

Միկրոֆլորալի բնույթը վորշելու համար պետք ե թանձր նյութից պատրաստած պրեպարատը դիտել միկրոսկոպով, Յեթե խմորիչներ են, ապա պաստերիզացիայից հետո այսպիսի կաթը պիտանի է վերամշակման համար, իսկ յուղաթթու, սպորատու և Aerogenes միկրոբների դեպքում, վորոնք ցույց են տալիս, վոր կաթը կեղտոտված և ֆեկալ մասսայով, ալղպիսի կաթը վերամշակման համար անպետք ե:

Խմորման փորձը, բակտերիաների միկրոսկոպիական հաշվման հետ (ըստ Բրիգի) զուգընթաց, տալիս ե կաթի բակտերիալ լավորակության լիակատար պատկերը:

### Մակարդի յեվ խմորման փորձ

Պանրագործության համար կաթի լավորակությունը վորշելու համար, մակարդալին խմորման փորձ են կատարում, վորի համար փորձանոթներում վորոշ քանակություններով պանրի մակարդ և կաթի խառնուրդ են պատրաստում: 38°—40°C ջերմաստիճանում: 12 ժամ անցնելուց հետո առաջացած պանրի բնույթով դատում են կաթի վորակի մասին:

